№ 1 (102) X ՏԱՐԻ ՅՈՒՆՈՒԱՐ 1900

„Droschak" ORGANE de la Fédération Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse: RÉDACTION DU JOURNAL "Droschak" GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

1899–1900

Մի տարի էլ սլացաւ...

Փորձենք փախչող ժամանակի ձեռքից մի րոպէ յետ խլել նրա աւարը եւ մի հայեացք՝ ձգել անցեալ 1899 թուականի վրայ։

Ամբողջ տարուայ խաւար տարածութեան վրայ՝ լուսաւոր կէտերից մէկն էր Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ Մակեդոնական Գերագոյն Կօմիտէի մէջ կայացած համաձայնութիւնը։ Այդ ուրախալի փաստը ամէնաառնական պատասխանն էր Լա Հէյի դեսպանաժողովին։ Երբ բռնաւորներն ոճրագործ համաձայնութիւն են կայացնում խեղդելու փոքր ազգերի ձայնը, բնական է, որ բռնութեան անարդար զոհերը, ինչ ցեղի եւ լեզուի պատկանելիս լինեն, նոյնպէս միանան ազատութեան միեւնոյն դրօշակի տակ՝ նոյն սրբազան յոյզով բռնուած եւ նոյն ատելութեամբ լցուած դէպի ընդհանուր դահիճները։

Նոյն Լա Հէյի դեսպանաժողովի առթիւ մենք վաղօրօք դիմեցինք լսելու մի շարք եւրօպացի յայտնի գործիչների կարծիքները հայկական հարցի մասին։ Այն պատասխանները, որով պատւեցին մեզ այդ օտարազգի հայասէրները, ամէնապերճախօս եւ համոզիչ վկայութիւններն են մեր մինչեւ այսօր ասածների ճշմարտութեան։ Համարեա ամէնքը, առանց խտրութեան, այն հիմնական միտքն են պաշտպանում, որ նոյն իսկ ներկայ պայմաններում, այն բոլորից յետոյ, ինչ որ տեղի է ունեցել, հայ ժողովուրդը գլխաւորապէս իր ուժերի վրայ պիտի յոյս դնի, եւ որ այդ ուժերի չափով ու արտայայտութեան եղանակով միայն կարող է պայմանաւորել արտաքին՝ քաղաքական, յեղափոխական եւ այլ ուժերի ցանկալի օժանդակութիւնը։

Այսքան պարզ, այսքան աչկարայ ճշմարտութիւնը չի կամենում հասկանալ նա, ով, ի մեծ անարգանք հայ ժողովրդի, նրա ներկայացուցիչն է համարւում, նրա արիւնոտ դատի անարժան հաւատարմատարը։ Մեր խօսքը Օրմանեանի մասին է, որ տակաւին շարունակում է ի չարը գործ դնել հայ ժողովրդի անհասկանալի համբերութիւնը, շարունակում է ստորաքարշ „քաղաքականութեամբ" պղծել, ոտնահարել այն բոլորը, ինչ որ նուիրական է այդ ժողովրդի համար։ Դեռ երբեք այդ Փարաջաւոր փաշան այնքան պարզ ցոյց չէր տուել այն բարոյական ճահիճը, որի մէջ լողում է ինքը, որքան անցեալ տարի՝ իր եզւիտական ճառերով, իր ամբողջ ստորաքարշ „բօլիտիքով", իր հրաժարականի խեղկատակութիւններով։ Ի՞նչ վաստակեց Օրմանեան իր այդ ամօթալի հրաժարականով։ Աւելորդ է, կարծում ենք, թուել նորից այդ առթիւ գազան սուլթանի իրադէում նշանակած կէտերը։ Օտար մամուլը ըստ արժանւոյն գնահատեց այդ կայսերական շնորհները, որոնք այսօր, ընդամէնը միքանի ամիս միայն անց իրենց հրատարակման օրից, արդէն մոռացուել են թէ շնորհողից, թէ ստացողից, թէ գործադրելու հրաւիրուածներից եւ թէ օգտուելու իրաւունք ունեցողներից։ Եւ Օրմանեանի անամօթ խաղը իր արիւնոտ, իր նահատակ ազգի հետ թող մի անգամ էլ ցոյց տայ հաշտութեան քաղաքականութեան սորկահոգի սիրահարներին, թէ ի՞նչ է նշանակում ունել համաձայնութիւն թիւրք կառավարութեան հետ...

Աւելի ողբերգականն այն է, որ մինչ Օրմանեան Պօլսի հայ եկեղեցիներում տիրասիրական օրինակներ էր ցոյց տալիս, աղօթելով գթած փադիշահի արեւշատութեան համար,—ճիշդ այդ ժամանակ այդ ողորմած գազանը միջոցներ էր ձեռք առնում, ռուսական կառավարութեան աջակցութեամբ, Կովկասի տաճկահայ գաղթականներին Կրէտէ տեղափոխել եւ այսպիսով մշտական դուռ բանալ պարբերաբար դուրս քշելու հայ ժողովրդին իր դարաւոր հայրենիքից ու նրա տեղը բնակեցնելու մահմեդականներին եւ քիւրդերին. ճիշդ նոյն ժամանակ հրաման էր ուղարկւում բոլոր նաւերին՝ ոչ մի հայ դուրս չհանել Պօլիս, ինչպիսի գործով եւ նա գալու լինի, ինչ պետութեան հպատակ եւ լինի. ճիշդ նոյն ժամանակ երեք հարիւր հայեր փողոտւում էին Մուշի գաւառում, բռնութիւնն ու կողոպուտը շարունակւում էր, սովի եւ հառաչանքի ձայնը երկինք էր բարձրանում...

Մինչ հայ ժողովրդի անարգանքը ներկայացնող Օրմանեանը այդպէս ստոր կերպով դաւաճանում էր իր ազգին, եւրօպական մամուլի ազնիւ փոքրամասնութիւնը պաշտպան հանդիսացաւ ամէնքից հալածւող եւ ամէնքից դաւաճանուած տաճկահայ գաղթականներին, բարձրաձայն բողոքելով արիւնաթաթախ սուլթանի այդ նենգ ծրագրի դէմ, որ բարեբախտաբար անիրագործելի մնաց։

Դաշնակցութիւնը նոյնպէս իր պարտքն համարեց բողոքի յայտագիր ուղարկել այդ մաքիավելական ծրագրի դէմ Կրէտէի խնամակալ պետութիւններից երեքին։

Անցեալ տարուայ մխիթարական երեւոյթների շարքում պիտի դասել ֆրանսիական մամուլի չիտակ մասի բռնած դիրքը դէպի հայկական հարցը, որ արտայայտուեց մինչեւ իսկ Կարմիր Սուլթանի սպառնալիքով դատի ենթարկել Aurore թերթի երեք աշխատակիցներին։

Իդէպ է այստեղ յիշել, որ 1899 թ. ընթացքում Դաշնակցութիւնը որոշ ջանքեր գործ դրեց անմիջական յարաբերութեան մէջ մտնել զանազան երկիրների ազնիւ մամուլի աչքի ընկնող ներկայացուցիչների հետ, որպէսզի հնար ունենայ Ելդըզի նեխած ճահճից

Ժամանակ առ ժամանակ դուրս եկող թունաւոր հոտերի աղբիւրն առնել, թոյլ չտալով, որ հասարակաց կարծիքը մոլորութեան մէջ ընկնի։ Ցաւալի անհրաժեշտութիւն է այդ, քանի որ եւրոպական բուրժուա մամուլը դեռ եւս չի կամենում վեր բարձրանալ այն ստոր մակերեւոյթից, ուր գործում են զանազան երկիրների քաղաքական-շահախնդրական հաշիւները։

Անցեալ 99 թուականը կը մնայ հայ յեղափոխութեան տարեգրութեան մէջ ամէնածանր, ամէնանայլայլող տարիներից մէկը եւ լուսաւոր Եւրոպայի ժամանակակից պատմութեան տխուր էջերին մի տխուր էջ էլ կ'աւելացնի։

Բայց ինչո՞ւ զայրանալ միայն Եւրոպայի անտարբերութեան դէմ. ինչո՞ւ դատափետել միայն եւրոպական մամուլի բռնած դիրքը. ինչո՞ւ այդքան պահանջող լինել միայն դէպի օտարը եւ ինչո՞ւ ամէն բան միայն նրանից սպասել։ Ի՞նչ էր անում այս ամբողջ տարուայ ընթացքում ինքը հայը. ի՞նչ էր անում հայութեան այն մասը, որ դուրս է փոթորկալի ճգնաժամից, որ օտարներից աւելի լաւ գիտի իրերի ցաւալի դրութիւնը, որ լսում էր սովի աղաղակները, որքերի լացը, լսում էր զէնք ու հաց պահանջող իր եղբօր ձայնը. ի՞նչ էր անում հայ բուրժուան, հայ երիտասարդութիւնը, հայ ինտէլիգէնցիան, մեր ժողովրդի ունեւոր եւ մտածող մասը։ Ոչի՛նչ, կը պատասխանենք մենք, որքան եւ ծանր լինի մեզ համար այդ դառն խոստովանութիւնը։

Նրանց կարծրացած սրտում ոչ մի ազնիւ ձայն արձագանք չտուեց, նրանց գօսացած ձեռքից ոչինչ չ'ընկաւ, որով կտրելի լիներ թէկուզ մազի չափ թեթեւացնել հեծող երկրի արիւնոտ բեռի ծանրութիւնը։ Նրանց փոյթը չէ, որ հայ յեղափոխականն ընկնում է անհաւասար կռուում՝ „փամփուշտ տէք" գոչելով եւ անէծքով փշրում է իր հրացանը ժայռի վրայ՝ սպասելով թշնամու գնդակին...

Այն ժամանակ, երբ տառապանքի հառաչները եւ օգնութիւն հայցող աղաղակները գալիս կպչում էին այդ անզգայ մարդկանց քարէ սրտերին եւ կորչում նրանց կրծքերի դատարկ տարածութեան մէջ, միայն տառապող ժողովրդի հարազատ զաւակ հայ յեղափոխականն էր, որ հաւատարիմ իր ազնիւ իդէալին ձեռները ծալած չնստեց։

Անցեալ տարուայ համարեա բոլոր կռիւներում զինատաք խմբերն էին մարտականի փոխուում, երբ նրանք իրենց անձնէր ճիգերի մէջ հանդիպում էին արգելքի քիւրդական եւ տաճկական հրոսակների կողմից։ Միամիտներին կեղծ արցունք ծախող մեր չարչի ազգասէրները երեւի կը կամենային, արեան երկիւղից, որ յեղափոխականն այդ անխուսափելի, ակամայ կռիւը չ'անէր, որովհետեւ Եըլդըզի գազանը կատաղում է, որովհետեւ Արթին եւ Օրմանեան փաշաները առանց այդ էլ հայոց աղգին երջանկութիւն են խոստանում։ Բայց յեղափոխականը այլ կերպ է հասկանում իր պարտքը. զէնքը, իր եղբայրների փրկութեան այդ միակ զրաւականը, թշնամուն տալուց առաջ, նա իր գլուխն է տալիս, իր արիւնն է տալիս։ Եւ այս չարաբաստիկ 99 թուին էլ նա մի շարք հերոսական կռիւներով ցոյց տուեց, որ ոչինչ նրան յետ կասեցնել չի կարող, քանի սարսափն ու բռնութիւնը վերացած չեն իր հայրենիքից։

Քանի՜ քանի՜ կռիւներ, միքանիսը, աւա՜ղ, թանկագին կորուստներով նշանաւոր, միւսները յաջող եւ յաղթական, եւ ամէնքն՝ առանց խորութեան՝ վեհ իրենց արիւնոտ փայլի մէջ։

Ահա Գուրգէնի եւ իր խմբի հերոսական մահը Ցրօնքի մէջ, ուր գնդակների սուլոցի հետ հնչող ֆէդայական ռազմերգը նոյնիսկ յուզում եւ ապշեցնում է թշնամու բանակի հրամանատարին, որ չի կարողանում հասկանալ, թէ ինչպէս հայ ֆէդային գնդակների տարափի տակ դեռ երգում է խրոխտաձայն՝

„Կուեցէ՛ք, տղե՛ր, կուեցէ՛ք քաջ քաջ",

կամ, երբ՝ գնդակը կրծքին՝ գետին է ընկնում, չի մոռանում, մի եղերական վեհութեամբ, արիւնոտ շրթունքներով կրկնել վերջին անգամ

„Մնա՛ք բարեաւ, սո՛ւր, հրացան,
„Մնա՛ք բարեաւ, ընկերներ"...

Այնուհետեւ Խանասորից մինչեւ Պազրջաղ ֆէդայական արիւնահեղ ընդհարումների շարքը, երբ ընդամէնը 18 հոգուց բաղկացած զինատար խումբը, միայն երեք ընկեր զոհ տալով, 500 թշնամիներից 78 զոհ առնելով եւ երեք օր ու գիշեր անընդհատ կուելով, հասնում է իր նպատակատեղին, յանձնում է իր բերած փրկիչ աւանդները բռնութեան տակ հեծող ժողովրդին...

Նրանց յետեւից գալիս է Արամը, որ կախաղանի բարձրութիւնից մեռնող շրթունքներով բացականչում է իր դահիճների ամօթահար երեսին՝ „Կեցցէ Յեղափոխութիւն, կեցցէ՜ Յեղափոխութիւն", վրէժի կտակ թողնելով իր կենդանի զինակիցներին։

Նահատակների այս սլէյդի մէջ առանձին փայլով երեւան է գալիս մի պատկեր, որի անունը խորին կսկիծով, սրտի դառն մորմոքով ենք արտասանում, — մեր անմոռանալի ընկերոջ, սքանչելի Սերոբի անունը. մի պատկեր, որ առանձնապէս մի հսկայ վեհութեամբ բարձրանում է Յեղափոխութեան արիւնոտ ֆօնից դուրս, անխառն, յստակ փայլով, անարատ մեծութեամբ, կոպիտ ու անտաշ, ինչպէս ինքը ժողովուրդը, բուռն ու փոթորկալից, ինչպէս նրա անսանձ զայրոյթը։ Եւ այդ պատկերից անբաժան մի սրտառուչ եւ հերոսական կանացի դէմք՝ Սերոբի կինը, Սասունի Ժան դ'Արկը, բանտում...

Հոկտեմբերին տեղի ունեցած Խաստուրի կռիւը, որի ճշգրիտ նկարագիրը ընթերցողը կը գտնի այս համարում, կարծէք մի վրէժ լինէր Սերոբի մահուան։ Այդ կռուում, որ սկսել էր մեր զինատար ընկերների կամքի հակառակ, զոհուեցին 15 ֆէդայիներ քաջի մահով, ընկնելով տասնապատիկ եւ քսանապատիկ աւելի թշնամիների դիակների վրայ։

Դոցա շարքին պէտք է դասուեն եւ վեց նահատակներ Հայաստանի մի ուրիշ ծայրում — Ասպաղայում, որոնք տարուայ վերջին Վասպուրական պիտի անցնէին, բայց դեկտեմբերի 2-ին դժբախտութիւն ունեցան թշնամու հետ բռնուելու *)։

Զինել եւ կուել, կուել եւ զինել, — այդ էր մեր զոհուած ընկերների նշանաբանը, այդ կը մնայ եւ նրանց հետեւողների նշանաբանը։

Այո, հայ յեղափոխականը չի խաբուիլ ոչ լքած հասարակութեան „քաղաքագիտական" զառանցանքներով եւ ոչ էլ մաքսանենգ հայրենասէրների անգործ „գործունէութեան" քարոզներով։ Առաւել եւս նա չի խաբուիլ եր-

*) Այս ընդհարման մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ կը տալի հետեւեալ համարում։

բեռք սուլթանական սուտ խոստումներով, եւ նրա պատասխանը զահակալ դահճի օրօրներին միշտ կը լինեն մեծ բանաստեղծի կրակոտ խօսքերը.

„Դալով ձեր խօսքին ու խոստումներին՝
Փոխանակ խաղաղ նիրհելու յուսով
Վստահանալով ձեր ձեռագրին,
Ապահով, հանգիստ ձեր երդումներով

Արտասանած սուրբ գրքերի վրայ, —
Ես աւելի շուտ անտառի վագրին
Հաւատ կ'ընծայեմ, խմացի՛ր, արքա՛յ,
Ահեղ եագուարին, վայրենի կատուին
Ես կը հաւատամ իմ կեանքն անխռով,
Եւ նրանց այրում, նրանց փորերին
Գլուխս դրած կը պառկեմ սիրով“...

ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԻՐՆԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Անցած 1899 թուականի տեսութիւնը՝ Թիւրքիայի վերաբերմամբ՝ լրացնելու համար, մենք դիմեցինք Մակեդոնիայի, Երիտասարդ Թիւրքիայի և Քիւրդական գործիչներից մեզ ծանօթ անձանց, խնդրելով իրենց հարցի մասին համառօտ տեսութիւն ուղարկել մեզ՝ „Դրօշակ“ի մէջ տպագրելու համար։ Այդ յօդուածները, որոնք մի-մի փոքրիկ ապացոյց են մեր քաղաքական փոխադարձ համակրութեան, ստորև տպագրում ենք թարգմանաբար (առաջինը գրուած է բուլգարերէն, երկրորդը՝ թիւրքերէն և երրորդը՝ քիւրդերէն լեզուով)։

I. ՄԱԿԵԴՕՆԻԱ

Ընկերնե՛ր,

Միմեանց ճանաչելը մեր փոխադարձ և ջերմ փափագը պիտի լինի։ Ահա թէ ինչու անկեղծ սիրով ուղարկում եմ „Դրօշակ“-ին այս յօդուածը և բախտաւոր կը լինեմ, եթէ նա մի փոքր նպաստի հայ ընթերցողներին ճանաչելու մեր՝ նոյնպէս դժբախտ հայրենիքը։

Մի շարք պայմաններ, որոնց թւում պէտք է դասել բուլգարական իշխանի հակառակութիւնը մակեդոնական յեղափոխական շարժման, ինչպէս նաև այդ ասպարէզում յայտնի գործողներից մէկի՝ Կիտանչեվի՝ մահը — բաւական թուլացրին մակեդոնական շարժումը վերջին տարիներում։ 1896 թւից պարզ նկատւում էր Բուլգարիայում մտքերի մի խառնաշփոթութիւն, հասարակական մի լքումն, որի հետեւանքը եղաւ ամբողջ երեք տարիների ընթացքում մակեդոնական գործի անշարժութիւնը։

Իրերի այդ դրութիւնը շարունակւեց մինչև անցեալ տարւայ սկիզբը։ Բայց ահա 1898-ի վերջերը սկսում են լսւել ամէն կողմից եռանդուն բողոքներ այդ անշարժութեան դէմ, և „Բարձրագոյն Մակեդոնական Կոմիտէն“, պարտաւորւած գործի դիմելու, անցեալ տարւայ յունուարին ուղարկում է մեծ պետութիւններին բարենորոգումների մի ծրագիր *), որի գործադրութիւնը Կոմիտէն միակ միջոցն է համարում մակեդոնական խնդիրը առանց արեան լուծելու համար։ Թէև այդ ծրագիրը վաղուց էր մշակւած, բայց միայն այժմ էր գործադրութեան առաջարկւում։ Իսկ ինչ արժանի է առանձին ուշադրութեան — այն է, որ, այդ ծրագրի համաձայն, պահանջելով ինքնավարութիւն մակեդոնական ամբողջ ազգաբնակութեան համար, Բարձրագոյն Կոմիտէն ընդունեց „Մակեդոնիան մակեդոնացիների համար“ սկզբունքը, մինչդեռ առաջ Մակեդոնիայի անունով հիմնւած զանազան կազմակերպութիւններ նպատակ են ունեցել, իսկ ոմանք մինչ այսօր էլ ունեն, անպատճառ միացնել այդ տանջւող երկիրը այս կամ այն տէրութեան — բուլգարական կազմակերպութիւնները՝ Բուլգարիային, սերբականները՝ Սերբիային, յունականները Յունաստանին և էլն, — մի հանգամանք, որ ջլատում է խսպառ հակատաճակական ուժերը Մակեդոնիայում։

Նոյն յունուար ամսից Բարձրագոյն Կոմիտէն կանոնաւորում է իր օրգան „Ռէֆօրմի“-ի հրատարակութիւնը, լոյս ընծայելով ամէն շաբաթ մի համար, սովորական լրագրի ձևով, մեծ մասը բուլգար և միւս մասը ֆրանսերէն լեզուով կազմած բաժիններով։

Բարձրագոյն Կոմիտէի այս գործնական քայլերը սակայն անկարող էին բաւարարութիւն տալ բողոքողներին, և դժգոհութիւնը Կոմիտէի դէմ շարունակւում էր։ Նախընթաց տարում իրականացած Կրէտէի ազատութիւնը, որ մի շարք հերոսական կռիւների արդիւնք էր, մեծ տպաւորութիւն էր գործել բուլգար և մակեդոնական շրջաններում, ու խօսքից դէպի կենդանի գործ դիմելու պահանջը օրէօր աւելանում էր։ Բարձրագոյն Կոմիտէն ստիպւած էր զիջանել և ահա անցեալ տարւայ մայիսի մէկին նա գումարեց կուսակցութեան արտակարգ Ընդհանուր Ժողով։ Ընդհանուր Ժողովի գլխաւոր խնդիրներն էին՝ յեղափոխական կենդանի գործունէութեան տակտիկան որոշել և նոր ընտրութիւններ կատարել, որ և ունեցան ցանկալի ելք։ Բարձրագոյն Կոմիտէի անդամներ ընտրւեցին բացարձակ յեղափոխականներ, եռանդուն երիտասարդներ, որոնցից մեծ մասը մասնակցել է 1895-ի ապստամբական շարժման։

Ահա ինչ արին կարճ ժամանակամիջոցում այդ մարդիկ.

ա) Մինչ անցեալ տարի՝ կազմակերպութեան մէջ գոյութիւն ունէին երկու իրարից անկախ ճիւղեր։ Դրանցից մէկը կոչւում էր „Ներքին“ և նուիրւած էր Մակեդոնիայի տեղական յեղափոխական գործերին, իսկ միւսը կազմում էին Մակեդոնիայից դուրս, Բուլգարիայում, գտնւող կոմիտէները։ Նոր Կոմիտէն համաձայնեցնելով կազմակերպութեան մէջ մնող բոլոր մարմինների փոխադարձ յարաբերութիւնները ու համաշխ գործակցութեան եղանակը, իմի ձուլեց այդ երկու ճիւղերը։

բ) Մի առանձին զարկ տւեց յեղափոխական կազմակերպութիւններին ամբողջ բուլգարական իշխանութեան մէջ, ուր համարեա բոլոր քաղաքներում և բազմաթիւ գիւղերում այժմ հիմնւել են գործող կոմիտէներ։

*) Տես „Դրօշակ“, 1899 թ., № 3.

գ) Իրագործեց 300,000 ֆրանկի „Մակեդոնական փոխառութիւնը", որ վճռուած էր Նախորդ Ընդհանուր Ժողովի կողմից և մինչ այժմ հրապարակ չէր հանուած։ Այդ փոխառութեան բաժնէտոմսերով ապագայ մակեդոնական կառավարութիւնը պիտի վերադարձնի փոխատուներին Մակեդոնիայի ազատութեան համար իրենց նուիրած գումարները։

դ) Լա Հէի խաղաղութեան դեսպանաժողովի առթիւ, միացած Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հետ, Բարձրագոյն Կոմիտէն մի առանձին յայտագրով դիմեց քաղաքակիրթ աշխարհին, յիշեցնելով երկու դժբախտ երկիրների դժոխային դրութիւնը, որ մշտական սպառնալիք պիտի լինի խաղաղութեան գործին Արևելքում։ Այս միութիւնը, որ, մեր տնասուն „քաղաքագէտների" շրջաններից դուրս, անկեղծ սիրով ողջունեց մակեդոնական բոլոր յեղափոխականների կողմից, իմ կարծիքով, քաղաքական հասունութեան մի նոր ապացոյց պէտք է համարել օսմանեան բռնութեան դէմ կուռող տարրերի մէջ։ Մի փոքր աւելի սէր ձեր և մեր հասարակութիւնների կողմից դէպի իրենց տանջուող ժողովուրդները— և համբերաշէտ կուի այդ գործնական քայլը բեղմնաւոր կը լինի իր հետևանքներով։

ե) Դիմադրելով բուլգարական բոլոր շովինիստ տարրերին և ջերմ կերպով պաշտպանելով մակեդոնական ինքնավարութեան գաղափարը, Բարձրագոյն Կոմիտէն մի առանձին ծառայութիւն է մատուցանում Մակեդոնիային, իմիջի այլոց նաև այն կողմից, որ տեղական ժողովուրդներից իւրաքանչիւրը, կապելով մակեդոնական հարցի հետ առանձին ազգային տեսակէտներ, հեշտութեամբ գործիք է դառնում տաճիկ կառավարութեան ձեռքում միս քրիստոնեաների ձգտումները խեղդելու համար։

Դառնալով այժմ բուն երկրին, մենք իհարկէ կանգ չենք առնիլ այն ընդհանուր պայմանների վրայ, որոնց մէջ կաշկանդած է ժողովրդական կեանքը Մակեդոնիայում։ Թիւրքական ռէժիմին յատուկ բոլոր սպանիչ գործոնները դուք, հայերդ, պատմական դժբախտութիւն ունեցաք աւելի սաստկապէս զգալու, քան ոևէ ուրիշ տաճկահպատակ տարր, և դրանց մասին ձեր ընթերցողների հետ խօսելը անտեղի պիտի լինէր մեր կողմից։ Մենք կը բաւականանանք յիշատակելով այստեղ մի քանի գծեր միայն Մակեդոնիայի անցեալ տարւայ կեանքից, — գծեր, որոնք թերևս մի փոքր գաղափար տան այն տագնապալից բնաւորութեան մասին, որ արդէն ստացել են տաճկա-մակեդոնական յարաբերութիւնները։

Տարւայ սկզբում, Բարձրագոյն Կոմիտէի պետութիւններին ուղղած դիմումից անմիջապէս յետոյ, Մակեդոնիայի Իպեկ քաղաքում կայացաւ ալբանական առնաւուտ պետերի մի ժողով, ներկայութեամբ Պոլսից ուղարկուած երկու թիւրք պաշտօնեաների։ Ժողովը, ինկատի ունենալով Մակեդոնիայի վերաբերմամբ եղած պահանջները, վճռում է դիմադրել ոևէ բարենորոգումների խնդրին, որովհետև Մակեդոնիան չպէտք է բաժանուի Ալբանիայից։ Գալով այդ դիմադրութեան ձևին, առնաւուտ պետերը խոստանում են կառավարութեան տրամադրութեան տակ դնել իսկոյն 20,000 մարդ, իսկ պատերազմի միջոցին՝ մինչ 200,000։ Կառավարութիւնը իր կողմից յանձն է առնում բաժանել տեղական բաշիբոզուկներին հարկաւոր չափով զէնք, որ և կատարւում է ամբողջ տարւայ ընթացքում։ Եթէ ինկատ առնէք, որ մեր առնաւուտները, եթէ ոչ աւել, գոնէ պակաս արիւնարբու չեն քան Հայաստանի քիւրդերը, կը տեսնէք, որ բացի տաճկական բանակից՝ Մակեդոնիայի քրիստոնեայ ազգաբնակութիւնը այսօր իր գլխին կանգնած ունի նաև տեղական „համիդիէ", որի միակ գործը իհարկէ պիտի լինի կոտորել մակեդոնացիներին, երբ այդ հրամայուի։

Յիշատակենք մի բան ևս, որ սուլթանական կառավարութեան նորագոյն կատարելագործութիւններից մէկը պէտք է համարել և որ, կարծում ենք, դեռ չի գործածուել Հայաստանում։ Մահմեդական տարրի մէջ մի յատուկ հակակշիռ ունենալու համար քրիստոնեաների դէմ, կառավարութիւնը հիմնում է Մակեդոնիայում, սոֆտաների միջոցով, թիւրքական „կոմիտէներ", որոնց նպատակն է հսկել քրիստոնեաների վրայ, ամէն կերպ դիմադրել նրանց ազգային ձգտումներին, մատնել „անվստահելի" անձնաւորութիւններ, յեղափոխական մարմիններ ևն։ Այդ „կոմիտէները" գործում են բացարձակ, ստանալով կառավարութիւնից և իրենց կողմից ուրիշներին տալով 50-ից մինչ 150 ոսկի վարձատրութիւն ամէն մի „օգտակար" մատնութեան համար։

Ահա և մի կարգ ուրիշ երևոյթներ, որոնք գաղափար են տալիս մակեդոնական ժողովրդի մէջ գոյութիւն ունեցող հոսանքների մասին։

Այդ կարգի փաստերից նշանաւոր են անցեալ տարւայ ընթացքում տեղի ունեցած բազմաթիւ տաճիկ լրտեսների սպանութիւնները։ Այնտեղ, ուր գործ չկայ, իհարկէ այդ տեսակ սպանութիւններ չեն կատարւում, և, ընդհակառակը, որտեղ կատարւում են դրանք, այնտեղ միշտ ենթադրւում են գործեր, որոնցից կարիք է զգացւում հեռացնել՝ „իշխողների աչքերը" — չեզոքացնել լրտեսներին...

Յիշենք այնուհետև Ստեփան Լազովի, Խրիստո Զեմկովի և Իւրգան Գավազովի նահատակումը անցեալ տարի։ Առաջինը, Պրիլեպ քաղաքի փողոցներում պատահելով մի քանի մատնիչների, յարձակւել էր նրանց վրայ և յետոյ, շրջապատելով ոստիկանութիւնից, կուի մէջ չորս մարդ սպանելուց յետոյ, ընկել էր և ինքը։ Զիմկով և Գավազովը, մատնուած լինելով կառավարութեան իրը յեղափոխականներ, մի տան մէջ պաշարւում են ոստիկաններից։ Զկամենալով անձնատուր լինել, նրանք դիմադրութիւն են ցոյց տալիս և միայն փամփուշտները վերջանալուց յետոյ ինքնասպանութեամբ զոհւում են ժողովրդի դատին։

Վերջապէս ուշադրութեան արժանի է հետևեալ դէպքը, ուր ինքնաբերաբար դերակատար հանդիսացաւ ինքը ժողովուրդը։ Յունիս ամսին Կումանովում (Սկօպսկի կազա) տաճիկ կառավարութիւնը բուլգարական մի եկեղեցի յանձնել էր սերբերին։ Բուլգարները բողոքեցին։ Բանը հասաւ բացարձակ ընդհարման, որից յետոյ տեղի ունեցան բազմաթիւ ձերբակալութիւններ։ Երբ տղամարդիկ, ոմանք բանտարկուած, ոմանք ցրուած, այլևս անկարող էին դիմադրել կառավարութեան, երևան եկան կանայք, որոնք բազմութեամբ գնացին Սկօպսկ՝ գանգատւելու տեղական իշխանութեան։ Սկօպսկում գայմագամը փոխանակ լսելու եկողներին, հրամայում է ցրուել նրանց։ Կանայք չեն հպատակւում. զինուած փայտերով և քարերով նրանք դիմադրում են, պա-

հանջելով թէ իրենց եկեղեցին վերադարձնել և թէ ձերբակալուած տղամարդկանց արձակել։ Թէ ինչ աստիճան խիստ կերպարանք է ստանում այս դիմադրութիւնը, կարող էք եզրակացնել այն իրողութիւնից, որ Սկօպսկ եկած բուլգարուհիներից մէկը — Եկատերինա Սեմիդչեվա, այնքան էր ծեծուել ընդհարման միջոցին, որ ձերբակալելուց յետոյ, յշի դրութեան մէջ, վախճանուեց բանտում։

Օրէօրաւելացող գաղթականութիւնը ժողովրդի մէջ նոյնպէս պարզ արտայայտութիւն է տիրող ծանր դրութեան։

Այո՛, երկրի ընդհանուր կացութիւնը այսօր բերել, որոշել է և դէմ առ դէմ դրել երկու իրար թշնամի բանակներ, և ով գիտէ, ո՞րքան ճիգեր, ո՞րքան զոհողութիւններ պէտք է պահանջուեն մակեդոնական հալածուող ժողովրդից, որպէսզի կարելի լինի ուէ փրկարար փոփոխութիւն ներմուծել նրա կեանքի մէջ... Ցամենայն դէպս պարզ է, որ թշնամի բանակներից մէկի անգործութիւնը միմիայն անպայման կորուստի դուռ է բաց անում նրա համար, և մակեդոնական ներկայ սերունդը այդ շատ լաւ է հասկացել...

ՍՏՕԻԼ ԲՐԱՆԴՕՎ

II. ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԻԱ

Բարեկամնե՛ր,

Կը ցաւիմ, որ չկրցի աւելի շուտ գրել ձեր ուղած յօդուածը, իսկ այժմ, գտնուելով ճանապարհորդութեան մէջ, ստիպուած եմ գրել շտապով և կարճ։ Ցամենայն դէպս, կարող էք վստահ ըլլալ թէ ձեր առաջարկութիւնը, որ դժբախտաբար չկրցի լիովին կատարել, ինձի ուրախութիւն պատճառեց։

Անցած տարիի սկիզբը Երիտասարդ Թիւրքիոյ Կոմիտէն պատգամաւորութիւն մը խրկեց արտասահմանի օսմանեան դեսպաններուն, հիւպատոսներուն և երևելի անձնաւորութիւններուն, հրաւիրելով զանոնք որ Կոմիտէին մէջ մտնեն։ Այս հրաւէրին նպատակն էր՝ դիւանագիտական շրջանակներու մէջ եղած պաշտօնեաները ձեռք ձգել և անոնց հետ միկտեղ Աբդիւլ Համիդի դէմ շարժում ընել։

Տարւոյն մէջտեղ Գահիրէէն Թունալը Հիլմիի կողմէ եգիպտական իշխանի մը՝ Մէհմէդ Ալի փաշայի անունով՝ „Յայտարարութիւն“ մը հրատարակուեցաւ։ Այդ Յայտարարութիւնը Երիտասարդ Թիւրքերու հարցը լուծելու համար կ՚առաջարկէր մեծ քօնկրէ մը կազմել, որուն պիտի հրաւիրուէին մահմեդական և ոչ-մահմեդական մեծամեծներ և Թիւրքիոյ մէջ առանձին առանձին գործող յեղափոխականներու ներկայացուցիչները։ Քօնկրէին մէջ ընդհանուր միութիւն մը յայտնուելէն ետքը, այդ այլազան տարրերէն ընդհանուր օսմանեան անունով Խառն Կոմիտէ մը պիտի կազմուէր։

Առջի յայտարարութեան մէջ հարկ կը տեսնուէր երևելիներուն մասնակցութիւնը գործին մէջ։ Այս հրաւէրին հրատարակումէն ետքը, դէպք մը վրայ հասաւ՝ Մէհմէդ փաշայի տղուն, Հայդար պէյի փախուստը։

Հայդար պէյի փախուստը Եըլտըզին մէջ մեծ իրարանցում պատճառեց, մանաւանդ երբ Եւրոպայէ Եգիպտոս անցնելով, հոն երիտասարդ Թիւրքերու հրատարակութեան յարեցաւ։

Այդ դէպքէն յետոյ ուրիշ աւելի կարևոր դէպք է սուլթանի քեռայր Ցամատ Մահմուդ փաշայի իր երկու տղոցմով Եւրոպա փախիլը և սուլթանի հասցէին կծու Բաց Նամակի մը հրատարակութիւնը, որ մեծ աղմուկ հանեց և առանձին ուժ տուաւ Երիտասարդ Թիւրքերու դատին։

Համառօտապէս՝ Երիտասարդ Թիւրքերու կուսակցութիւնը իր մէջ կը բովանդակէ ականաւոր անձինք։ Ատոր ապացոյց են այս տարուան Պօլսոյ անցուդարձերը. այսինքն երբ դիմենք վերջի տարւայ ձերբակալումներու վիճակագրերուն, կը տեսնենք թէ մեծ մասը աւագանիներ են. ասոնցմէ էին նշանաւոր Զիեա մօլլա և ուրիշ շատեր, որոնք բանտարկուեցան և աքսորուեցան։

Այսօրուան օրս՝ Երիտասարդ Թիւրքիոյ անունով ձերբակալուածներու թիւը մինակ Պօլսի մէջ—չհաշուելով նահանգներունը — երեք հազարէն աւելի է. 2900 հոգի աքսորուած են պետութեան հեռաւոր սահմանները՝ Ափրիկեան Թարապուլուս, Եէմէն, Պաղտատ, Պասրա, Մուշ, Տիգրանակերտ, Էրզրում, Հէքեարի և լն. 450 հոգի բանտարկուած են, 25-ը Պօլսոյ մէջ, որոնցմէ 6-ը մշտնջենական պատժի։ Պօլսոյ բանտարկուածները կը բաղկանան բժշկական, իրաւագիտական և զինուորական վարժարաններու ուսանողներէ, արդարութեան պաշտօնեաներէ. կան նաև վաճառականներ և մօլլաներ։

Իսկ ուրիշ ամէնակարևոր կէտ մը, Պօլսոյ ձերբակալումներուն իբր հետևանք, զանազան ձևերով ռումբերու բռնումն էր Եունուզ Պէքեր անուն անձի մը վրայէ և տունէ մը։

Ցարդ անանկ կը կարծէր թէ երիտասարդ Թիւրքերը գործունէութեան և յեղափոխութեան դէմ են։ Իրաւ է „Մէշվերէթ“ լրագիրը, որ կը հրատարակուի ֆրանսերէն լեզուով, ինքզինքը կը հռչակէ „ընաշրջական“ և չուզեր բռնադատել հանգամանքները, բայց „Օսմանլը“, որ կը հրատարակուի Թիւրքերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով, Ռիզա պէյի այդ դանդաղ թէօրին աննպատակայարմար կը գտնէ և հաշտ չէ անոր հետ այս մասին, թէև եւրոպական գործունէութեան մէջ կ՚աջակցին իրարու, առանց սակայն իրենց փոխադարձ սկզբունքը զոհելու։

Այս ամէնքը ապացոյցներ են թէ երիտասարդ Թիւրքերու թարմ մասը կուսակից է յեղափոխութեան, որուն գործադրութեան համար ձեռնարկներ կընէ։ Ասկէ առաջ նմանօրինակ դէպքեր կան. միայն անցեալի ռումբի պատրաստութիւնը ներկայիս չափ ահարկու չէր։ Ի՞հարկէ երբ ահարկու կըսենք, իր կարևորութեան և պէտքութեան տեսակէտով...

Թէ քօնկրէին ջանքերը և թէ երիտասարդ Թիւրքերու զանազան հրատարակութիւնները ակներև ապացոյց մըն են թէ Երիտասարդ Թիւրքիան յեղափոխականներու միութեան ցանկացող է։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔ ՄԸ

III. ՔԻԻՐԴԵՐ

Հայրենակիցնե՛ր,

Դուք ալ կը համաձայնիք, կարծեմ, որ շատ հազուագիւտ է տեսնել քիւրդի մը ձայնը միացած հայկական բողոքին՝ ընդդէմ այն բռնութեան, որ սովորաբար կը

համարուն քիւրդական տարրերի հովանաւոր: Այդ պատճառով ես առանձին սիրով կըշտապեմ օգտուիլ ձեր հրաւէրէն՝ հաղորդելու քանի մը տեղեկութիւններ իմ ցեղակիցներուս արդի վիճակի մասին:

Հայկական կոտորածները ծագած ատեն քաղաքակիրթ աշխարհի բոլոր լրագիրները գրեցին թէ քիւրդերը իրենց դրացի եղող հայերը կըսպաննեն: Այս անպատուութիւնը ամբողջովին քիւրդերուն վրայ ծանրացաւ, բայց ես կ'ուզեմ, որ իրողութիւնը պարզուի:

Մուսա պէյի դատի ատենն իսկ շատերը գիտէին, որ Մուսա պէյ այդ բանը ինքնիրգլխուն չ'ըրաւ, որուն էն մեծ ապացոյցն է յիշեալ պէյին այնքան մեղաւոր ըլլալէն ետքը դատաստանի առջև արդարանալը:

Կառավարութեան հայերուն ջարդելու միտքը ռուս-թիւրքական պատերազմէն կըսկսի: Այն ատեն Աբդիւլ Համիդ Քիւրդիստան իրատէ մը խրկեց, որով կը հրամայէր հայերուն ինչքը թալանել, զանոնք կոտորել, բռնադատել հայրենիքնէն հեռանալու: Բոլոր քիւրդ աղաները և պէյերը ջան ժողով մը կազմեցին: Այս ժողովին մէջ քիւրդերու մեծ շէյխ՝ Շէյխ Իպատուլլահ ոտի ելաւ և ըսաւ. „Շատ հին ատենէ իվեր հայերը և քիւրդերը այս երկրին մէջ դրացիներ են. եթէ մենք այսօր զանոնք կոտորենք՝ վաղը թիւրքերը պիտի սկսին մեզ կոտորել. ես կը կարծեմ որ քիւրդերը այդ կը հասկնան և չեմ յուսար որ քիւրդ մը գտնուի, որ այդ դաժանութիւնը յանձն առնէ“: Շէյխ Իպատուլլահ ազդեցիկ ըլլալով, միւսները համակերպեցան: Ասոր վրայ ժողովը ցրուեցաւ և Աբդիւլ Համիդի փափաքը չկատարուեցաւ:

Յետոյ Աբդիւլ Համիդ իր կամքը առաջ տանելու համար Համիդիէ հեծելագունդը կազմեց, հովիւներու, ծառաներու հարիւրապետութեան, հազարապետութեան աստիճան տուաւ. քիւրդերը ատ տեսնելով վազեցին զինուորագրուեցան ու ստացան զգեստ և զէնք: Երէկ ծառայ և հովիւ եղող մը, երբ հարիւրապետութեան կը բարձրանայ, ոչ միայն հայը, այլ իր հայրն իսկ կըսպաննէ: Ապա Աբդիւլ Համիդ քիւրդերու մէջ տարածել տուաւ թէ հայերը, Ռուսիոյ հետ համաձայնելով, մտադիր են քիւրդերը ջարդել: Քիւրդերը գրգռելէ և մոլեռանդելէ ետքը, շատ չանցած, հեռագրեց Զէքի փաշային Տալւորիկը զարնել: Ահաւասիկ այսպէ՛ս մ ե ք ե ն ա յ ու ա ծ է հայա-քիւրդական կռիւը:

Ասկէց յետոյ կըսկսի հայոց զարհուրելի կոտորածներու շարքը: Սակայն ձեր ուշադրութիւնը կը հրաւիրեմ այն հանգամանքի վրայ, որ Խիզան, Պօթան, Ճէզիրէ, Սենճարի կողմի քիւրդերը ոչ մէկ հայ չսպաննեցին: Կը հարցուի՝ ինչո՞ւ մէկալ քիւրդերը ջարդեցին, իսկ ասոնք բան չըրին. — այն պատճառաւ որ ասոնց բարքերը անխառն մնացած էին: Արդէն այս կողմի քիւրդերը թիւրք կառավարութենէն գոհ չեն և կառավարութեան խորամանկութիւնները գիտեն: Ասոնք քանիցս ապստամբեցան կառավարութեան դէմ. ամենէն նշանաւորը Պէտրխան փաշայի ապստամբութիւնն է: Անոր բանակի մէջ շատ մը հայեր ալ կային: Սակայն այն ատեն կառավարութեան կողմէ խրկուած 60,000 զօրքը մեծ մասով կոտորեց զանոնք: Երկրորդ ապստամբութիւնը՝ Պէտրխանի որդին՝ Հիւսէյն պէյը ըրաւ. կառավարութիւնն ատ ալ խեղդեց. ատոր համար է, որ այս կողմի քիւրդերը կառավարութեան թշնամի են, ուստի և հայերուն գէշ աչքով չեն նայիր: Այսօրուան օրս, Պօթանի, Խիզանի, Ճէզիրէի, Սենճարի քիւրդերը կ'ուզեն, որ իրենց պաշտօնեաները և դատաւորները իրենցմէ ըլլան, և երթալով այս գաղափարը կ'ընդհանրանայ:

Այս տեսակ փաստերը ինծի կը դրդեն ցանկանալ, որ հայերը ձեռք ձեռքի տուած ըլլան այս անխառն ու մաքուր մնացած քիւրդերուն հետ: Հաւանական է որ տողերս կարդացողները ըսեն՝ „ի՛նչ ցնորք, ի՛նչ երևակայութիւն“, բայց կը հաւատամ, որ աշխարհի մէջ գաղափարական ջանքերը ապարդիւն չեն մնար: Եւ ես այս ճամբով պիտի աշխատիմ, և թոյլ տուէք աւելցնել, որ յուսահատուողներէն չեմ: Եթէ մենք մեռնինք, անշուշտ մեր զաւկըները պիտի աշխատին և անոնք անպատճառ պիտի յաջողին: Դեռ ասկէ 60 տարի առաջ քիւրդ բանաստեղծ մը կամ՝ աւելի ճիշդն ըսած՝ ժողովրդական աշուղ մը, քիւրդական լեզուով գրած երգերու մէջ, տաճիկ կառավարութեան դէմ կը բողոքէր և այս համերաշխութիւնը կը քարոզէր: Մտադրութիւն կայ այս գրուածքը տպագրել և տարածել, որպէսզի քիւրդերու մէջ այս գաղափարը աւելի բորբոքուի:

Յայտնի է, որ քիւրդերու և հայերու մէջ՝ դէմքերու և սովորութիւններու խիստ նմանութիւններ կան. այս երկու ժողովուրդները նոյն ընտանիքին կը պատկանին: Եթէ անոնք, որոնք նոյն բռնութեան տակն են, իրարու հետ չհամաձայնին, որո՞ւ հետ պիտի համաձայնին: Շատերը պիտի հարցնեն թէ այս համաձայնութեան ճարը ո՞րն է: Տարաբախտաբար հ ր ա պ ա ր ա կ ո վ անկարելի է այդպիսի գ ո ր ծ ն ա կ ա ն հարցի մը պատասխանել: Դա յեղափոխական կոմիտէներու ներքին գործողութիւններու շրջանակին կը վերաբերի:

Գալով այն երևոյթներուն, որոնք այսօր ամէնքիս աչքի առաջն են, ես պիտի յիշատակեմ հոս քիւրդ հայրենասէրներու փոքրիկ խմբի մը գոյութիւնը, որ արդէն երկու տարի է կը հրատարակէ իր յատուկ լրագիրը „Քիւրդիստան“ անունով և անոր միջոցաւ փոքր առ փոքր կ'արծարծէ քաղաքակրթական մտքեր: „Քիւրդիստան“-ը կը պահանջէ, օրինակ, համերաշխութիւն հաստատել հայերու հետ, ուսում, գրագիտութիւն տարածել քիւրդերու մէջ, դիմադրել թիւրք կառավարութեան քիւրդ տարրը բաժան-բաժան ընելու դիտումին և նոյն իսկ բռնի ուժով դիմադրել անոր ապօրինի գործողութիւններուն: Իվերջոյ „Քիւրդիստան“-ի մէջ հրաւէր կը կարդացուի քիւրդերուն թողնել թափառական, աւազակային կենցաղը և սկսիլ խաղաղ ու աշխատաւոր կեանք:

Այս կոչումները, ճիշդ է, այսօր դեռ թոյլ են և նորաբողբոջ, բայց պիտի յուսանք, որ ատոնք իրենց պտուղները կ'ունենան և անշուշտ կարող կըլլան ստեղծել երկրի մէջ զգալի հ ա կ ա ս ու լ թ ա ն ա կ ա ն ուժ մը:

ՔԻՒՐԴ ՄԸ

ՀԱՅԴՈՒԿԻ ՆՈՐ ՏԱՐԻՆ

Լո՛ւռ. մի՛ մրմնջար. քայլիր հանդարտ, ընկեր. տղամարդի կրծքից թռած հառաչը ժպիտ է բերում չար բախտի դէմքին: Զինուոր այս լեռը պիտի անց կենանք. չէ՞ միւս կողմից է բերում մեզ քամին ողբ ու հառաչի աղեխարշ ձայներ. այնտեղ կ'ասես ձորերն են տնքում. սղմիր հրացանդ թարմ վէրքիդ վրայ, պի՛նդ, պի՛նդ, և

առաջ քայլենք։ Նոր տարին մոտ է. չլինի թէ նա հասնի և մեզ թոյլ ու ընկճուած տեսնի։ Տե՛ս, երբ այն պլպլան աստղը այս լեռան կատարին հասնի, այն ժամանակ Նոր տարի կը լինի...

Վերելքը ծանր է, ճանապարհը նրկար, բայց շատ ենք անցել։ Լո՛ւռ քայլիր, ընկեր. առաջդ լաւ նայի՛ր. ձեանը չհաւատաս. ինչպէս երբեմն սրտերի քէնը, հոգիների թոյնը մարդիկ ծածկում են նենգ ժպիտների խաբուսիկ քօղով, այդպէս էլ ձիւնի սպիտակ սաւանը պաղ դեղեցկութեան դաւաճան քօղի տակ անդունդ է ծածկում մեր ոտքերի տակ։ Այսքան քայլել ենք և ի՞նչ օրերով, — մեղք է, որ Նոր տարուն մոտիկ յանկարծ կուլ գնանք մի խորխորատում։ Տե՛ս, աստղը հեռու չէ լեռան կատարից. էլի մի փոքր, և Նոր տարի կը լինի...

Ի՞նչ ցուրտ է, ընկե՛ր. գիտեմ, մրսում ես։ Դէ՛ մենակ մենք չենք. քանի՞ քանիսները մեզ պէս մրսում են, դողում, սարսռում. ձմեռ է պատել մեր ողջ երկիրը. որբեր, այրիներ դողում են ցրտից, և ծերերն իրենց չորացած բազուկները ծոցերում կծկած՝ դողում են, դողում։ Եւ ում որ միսը չի դողում, ում պարարտ մարմինը պատած է ոսկու և արծաթի զրահով, նրա էլ հոգին է մրսում, հոգին է դողում։ Եթէ որ մենք էլ նրանց պէս դողանք, էլ ո՞վ պիտի դիմաւորի Նոր տարուն։ Տե՛ս, աստղը մոտ է լեռան կատարին, և Նոր տարին հեռու չէ մեզնից...

Էլի մրմնջացիր. ցաւո՞ւմ է վէրքդ. կեցի՛ր, իմ ընկեր, թո՛ղ որ իմ շնչով մի փոքր փչեմ, տաքացնեմ նրան։ Հաւատա, ընկեր, մտերմի շունչին. նա փրկարար է, վէրքը է բժշկում, հոգի է տալիս, սիրտ է տաքացնում, բոցեր է վառում։ Թո՛ղ, թո՛ղ որ փչեմ այդ վէրքիդ վրայ. հաւատա, հոգիս, այդ հզօր ճար է. ա՛յ այս լաթովս էլ կը կապեմ վէրքդ... Այսպէս լա՞ւ է. այժմ հանգի՞ստ ես. դէ՛հ բռնիր հրացանդ. փողը դեռ տաք է. պինդ սղմիր ձեռքիդ. լաւ չէ, որ Նոր տարին քեզ առանց հրացան տեսնի։ Տե՛ս, աստղը մոտ է. էլի մի փոքր և Նոր տարի կը լինի...

Մռայլ է չորս կողմերս, խաւարը թանձր. լուռ է ամէն ինչ, ասես մեռել է ողջ տիեզերքը. սարսափը խաղում է աշխարհի վրայ, մարդիկ վախում են ձայն տալ իրարի, նոյնիսկ մոռացել են, թէ Նոր տարի է գալիս. ցաւերի մեծ բեռը մէջքերին դրած՝ արիւնոտ շղթուքներով ժպտում են երկիւղից բռնութեան դէմքին և սարսափի հանգստի մահաբեր ծոցում լռել են, մնջել և սպասում են... Ինչի՞... հրաշքի... Անմիտ գլխին՝ բարիքով ամուլ ու չար եկինքը միայն շանթ ու փոթորիկ ունի։ Եթէ որ մենք էլ նրանց պէս լռենք, ո՞վ պիտի դիմաւորի Նոր տարուն։ Դէ՛ քայլիր, ընկեր...

Տե՛ս, սիրելի՛ս, ի՞նչ հանդարտ ու վստահ սահում է աստղը երկնի երեսին. ցոլքերը պայծառ, շողերն իստակ, ասես լողում է անսահմանութեան մէջ՝ մարդկանց ցոյց տալու, թէ ի՞նչ ասել է ազատ ու անկախ կեանք. նրան չեն հասնում ներքևի մռայլն ու խաւարը. նա չգիտէ՝ ինչ ասել է շղթայ. բռնութիւնը չի կարող նրան կանգնեցնել. հպարտ պատռում է խաւարի քօղը և առաջ գնում։ Ով ուզում է այնպէս ազատ ու անկախ լինել, ճիշդ այնպէս պիտի պատռի բռնութեան քօղը և առաջ ընթանայ։ Քայլենք դէպի վեր. կատարը մոտ է, և հէնց այնտեղ մենք կը տօնենք Նոր տարին հրացանի որոտով...

Դեռ արշալոյս էր, երբ ճանապարհ ընկանք։ Քանի՞ հոգի էինք. այժմ մնացել ենք երկուսով միայն։ Որքա՞ն ենք քայլել ծանր էր ճանապարհը. ստոր մատնութիւնը բռնութեան արիւնոտ թաթիցը բռնած քայլում էր մեր յետևից. որքան զոհ տուինք. բուքն ու փոթորիկը խլեցին տարան. ցուրտն ու խաւարը մէկէն կուլ տուին... Մենք ենք մնացել, զոյգ ապստամբներ. ի՞նչ փոյթ թէ քիչ ենք. ամէն ընկնողի վերջին հառաչից մենք հիւսել ենք մեր վայրենի երգը. նրանց զայրոյթի թունոտ կաթիլներով մենք համեմել ենք մեր ատելութիւնը չար բռնութեան դէմ։ Նրանց մեծ սրտի սրբազան բոցից մի մի շիթ խլած մեր ըմբոստ ոգու թեւերն ենք հիւսել և սլանում ենք վրէժի շնչով՝ ուր կանչում է նուիրական պարտքը. մենք կը չանգռենք յուսահատութեան խոպան, կոշտացած հողը և նրա կրծքին կը ցանենք յուսոյ սերմերը արիւնոտ ձեռքով... Քայլիր, ընկեր։ Մոտ է աստղը։ Տե՛ս, երբ նա այս լեռան կատարին հասնի, այն ժամանակ էլ գիշեր կը լինի, Նոր տարի կը լինի...

Կանգ առ մի փոքր։ Այս ի՞նչ պատահեց. խաւարը սաստկացաւ. տես, ընկեր, աստղը ծածկուեց կատարին չհասած. այն մռայլ ամպը իր սև ծոցի մէջ կուլ տուեց նրան։ Մոտալուտ տարւայ պլպլան նշանն՝ էլ չենք տեսնում. էլ կա՞յ այս երկրում մի ուրիշ նշան, որ մենք իմանանք Նոր տարու մուտքը։ Ե՞րբ կը գայ նա և երբ կ'անցնի, այդ մենք այլևս գիտենալ չենք կարող։ Քանի՞ տարի է, որ մենք չգիտենք, թէ ինչպէս գալիս է ու անցնում մեր գլխով Նոր տարին. թող այս էլ անցնի։ Բռնութեան ճիրաններում կեանքը մեր երկրում դարձել է արիւնոտ ժամերի մի շարք. ի՞նչ ասել է այստեղ Նոր տարի, երբ օրերը սև են, հողերը կարմիր... Խաւարը թանձրացաւ. մռայլը ճնշում է. ցուրտը սաստկացաւ, ասես ժայռերն էլ են ցրտից դողդողում... Ահա և լեռան կատարը. հասանք վերջապէս։ Տե՛ս այնտեղ ներքևում սև սև ստուերները. գիւղեր են նրանք. լուռ են ու մեռած. աստղի Նոր տարին չի կարող տալ նրանց կենդանութիւն. երկնքից իջնող լուսոյ շողերը միշտ փոփոխական են և անհաստատ, ինչպէս երկնքից իջած ձրի շնորհը, որով դեռ ոչ ոք երջանիկ չի եղել երկրիս երեսին...

Փոյթ չէ այդ, ընկեր. իջնենք վար շուտով. թողնենք երկինքը հանգիստ իր տեղում. հրացանի բոցով պատռենք խաւարը. գնդակի որոտով խռովենք այս հոգեհան լռութիւնը. խօսենք այն լեզուով, որ ամենասոսկալին է բռնութեան համար, ազատութեան լեզուով, որոտի լեզուով, շանթերի լեզուով. կուի գոռոցի մէջ խեղդենք բռնութեան լպիրշ քրքիջը. քանդենք այս գիւղերի լեզուի կապանքը. մի փոքրիկ կայծ դնենք նրանց շղթուքներին. մի փոքրիկ բոց դնենք նրանց սրտերում. չորացնենք այնտեղ լացի աղբիւրը, և այն ժամանակ մենակ չենք մնայ, և այն ժամանակ կը գայ իսկական Նոր Տարին. փոյթ չէ՝ թէ այն աստղը ծածկուի ամպերով. փոյթ չէ նոյնիսկ՝ եթէ ողջ երկինքը կորչի խաւարում...

ԽԱՍՏՈՒՐԻ ԿՌԻՒԸ

(ՆԱՄԱԿ ՌՈՒՍ-ԹՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼԽԻՑ)

Հոկտեմբեր 26-ը յիշատակելի կը մնայ յեղափոխական տարեգրութեան մէջ։

Առաւօտեան ժամը 4-ն էր։ Մեր զինակիր յոգնած խումբը Բագրեւանդի (Ալաշկերտ) Խաստուր գիւղի մօտ պահ մի կանգ առաւ։ Պարզ էր, որ կանխորոշ դիրքը չպէտք է կարողանայինք հասնել, որովհետեւ դեռ ևս 4-5 ժամուայ ճանապարհ ունէինք առաջներս, իսկ յոգնած մարդուն՝ այդքան ճանապարհ անցնելու համար կրկնակի ժամանակ է հարկաւոր։

Անհրաժեշտ էր հանգիստ առնել։

Շուրջանակի նստեցինք գետնի վրայ և սկսեցինք խորհել, արդեօք չի՞ կարելի մօտակայ սարերը ապաւինել և ուեւ ձեռնտու դիրքում ցերեկը անցնել։ Վալաղների ասելով, մօտակայքում ամենևին յարմար դիրք չկար։ Լեռները հեռու էին։

Մեր դրութիւնը շատ վատ էր։ Առաջներս տարածւում էր մի ընդարձակ դաշտ. կամայ թամայ պէտք է դաշտում մնայինք, իսկ դաշտում ցերեկեան ընդհարումը անխուսափելի էր։ Միւս կողմից՝ ցուրտը աւելի շատ էր նեղացնում քան յոգնածութիւնը։

— Գիւղ մտնենք, — ասաց խաստուրցի Ղուկասը, — և քանի որ անուս ֆէդայի է, տուս էլ, տեղս էլ մալ ու մուլքս էլ թող այս հրացանիս զուրբան լինեն։ Ընկերնե՛ր, չ'ուշանա՛նք. աստղերը շուտով երկնքում կ'աներևութանան. արշալոյսը հեռու չէ։ Շուրջերնիս խորին լռութիւն է տիրում։ Ինչո՞ւ ենք այսպիսի ցրտում սառը գետնի վրայ տարածւել. սկսում ենք պաղել. վեր կացէ՛ք գնանք մեր տուն։

— Գիւղ մտնել, շշնջոց բարձրացաւ, բայց...

— Էլ ինչ բայց, — ընդհատեց Ղուկասը — բայցերի ժամանակը անցել է. գոնէ մի ժամ կը հանգստանանք և չենք պաղիլ բեխերիցս սառցի կտորներ են կախւել...

— Վեր կացէ՛ք գնանք, — կրկնեց Ղուկասը և դէպի գիւղը վազեց։

— Գիւղ մտնե՛նք, կրկնեցին վալաղները. ամենայարմարը գիւղն է. եթէ կուի բռնւելու լինենք, գոնէ մի փոքր հանգստացած կը լինենք և պաղած չենք լինի, իսկ եթէ ոչինչ չպատահի, աւելի լաւ, երեկոյեան դէմ բոլորովին թարմացած վեր կը կենանք ճանապարհներս կը շարունակենք։

— Աւելի լաւ է դաշտում մնանք, քան գիւղ մտնենք. եթէ ընդհարում ունեցանք այստեղ, գոնէ մենակ մենք կը տուժենք, իսկ եթէ գիւղում բան պատահեց՝ գիւղացիք էլ կարող են վնասւել, — ասացին շատերը և նորից մեկնեցին սառը գետնի վրայ։

Վալաղները դեռ ևս համոզում էին, երբ Ղուկասը վազելով յետ դարձաւ. „ամէն ինչ պատրաստ է. գիւղում ոչ քիւրդ կայ, ոչ էլ ասկեար, շուտ արէ՛ք գնանք“։

— Գնա՛նք, ոչ մի վտանգ չկայ ոչ գիւղի և ոչ մեզ համար, — յուսադրում էին վալաղները։ Նրանք առաջ անցան. խումբը հետևեց նրանց։

Գիշերային խաւարը թանձրացել, վաղուց ընդդրկել էր առօրեայ աշխատանքից խոնջացած գիւղը։ Հեռուից մի ինչ որ խուլ ու աններդաշնակ ձայն էր լսւում, որ գիւղական շների ընդհանուր ու անընդհատ կաղկանձոցի հետ միախառնելով՝ խիստ անհաճոյ համերգ էր կազմում։ Ձայնը հետզհետէ մօտենալով ասիական քարաւանի անցն էր յայտարարում։

Քարաւանը անցաւ։ Մեր առաջ ճռնչաց խարխուլ հողակոյտի դուռը. „մտէք“, ձայնեց մէկը ներսից։

Գոմ էր մեր ասպնջականը։ Խաչիկ վարժապետը, որ տան տէրն էր, թէև ճրագը վառել էր գոմը լուսաւորելու համար, այնուամենայնիւ այնչափ մութն էր, որ հազիւ հազ նկատելի էին պատերի մօտ շարուած անասունները։ Գոմը ընդարձակ էր և տաք։

Մեր բարեւներին՝ „բարի էք եկել եղբայրներ“, պատասխանեց վարժապետը յուզուած ձայնով, և երկու խոշոր կաթիլներ գլորուեցին նրա շիկացած այտերից...

„Զափազանց ուրախ եմ, շարունակեց նա, որ ձեզ իմ յարկիս տակն եմ տեսնում։ Անհոգ եղէք. յոյս ունեմ, որ մեզ ոչ մի վտանգ չի սպառնում։ Իսկ հակառակ դէպքում՝ թող իմ արիւնս էլ մեր սրբազան դատին նուիրական լինի, և թող մեր նահատակ դիակների վրայ հիմնադրւի մեր և մեր սերունդների փրկութիւնը, ազատութիւնը“...

Մենք համբուրեցինք...

Մի քանի բոպէ ևս, և հանգիստ քունը տիրեց բոլորիս։ Հանգիստ էինք, որովհետև դրսում Խաչիկի պէս արթուն պահապան ունէինք, իսկ ներսում մեր զինակից հերթապահ ընկերներն էին հսկում...

Լուսացաւ։ Տղերքը սկսեցին հետզհետէ արթնանալ։ Մէկը հրացանն էր սրբում, պատրաստում, միւսը չարքխի կապերն էր ամրացնում, երրորդը թութունը հանել, ծուլօրէն գլանակ էր շինում ծխելու... Խաչիկը մի քանի անգամ ներս ու դուրս էր արել և ամէն անգամ բարեյաջող լուրեր էր բերել։ Բոլորի երեսին էլ մի տեսակ թմրութիւն ու թախիծ էր երևում։ Կարծես անբաւական լինէին ներկայ հանգստութիւնից։ Եւ ինչպէս չթմրէր ու չտխրէր սարերի զաւակ ֆէդային՝ փակուած այս անտանելի գոմի հեղձուցիչ տօթում։

Ժամը 10-ն էր։ Խաչիկ վարժապետը ուշացաւ, չէր երևում։ Ցանկարծ մի կին դռան շէմքից թշնամու զօրքերի գալուստը գուժեց. „Պատրաստ եղէք“, ասաց նա ու անմիջապէս հեռացաւ։

Տղերքը իսկոյն տեղներից վեր թռան, և, խմբապետի հրահանգի համաձայն, տասնեակները նշանակուած տեղերը կանգնեցին։

Ասկեարները մեր հոտը առել էին, բայց սակաւութեան (100 հոգի) պատճառով չէին համարձակւում մօտենալ։

Մեր ներկայութիւնը իմանալուն պէս, դրանք դուրս էին եկել գիւղից, այս ու այն կողմն էին ցրուել, նախ որպէսզի հաւարի կանչէին շրջակայ համիդիականներին, և երկրորդը՝ ժամանակ վաստակէին, մինչև օժանդակ զօրքերը կը հասնէին։ Ղարա-Քիլիսայից թնդանօթների էին սպասում։ Գիւղացիների կարծիքով, զօրքը սարերն էր քաշւում մեզ այնտեղ փնտրելու համար։

Մենք կազմ ու պատրաստ սպասում էինք։ Առաջեան թմրութիւնն ու թախիծը տեղի էին տուել աշխոյժ կենդանութեան։ Հասել էր բոպէն, երբ ամէն մէկը իր շնորհքն ու արիութիւնը ցոյց էր տալու ընդհանուր թշնամուն։ Զէ՞ որ ֆէդայի ենք։ Մի վայրկեան ևս, և ճակատ առ ճակատ կը զարնւենք Եըլդըզ-Քէօսքի նեցուկների հետ։ Ա՜խ, ի՜նչպէս ուշանում են. վայրկեանները կարծես տարիներ լինեն։ Մեզ համար այլևս ոչինչ չկայ

ամբողջ տիեզերքում բացի կռուից,—վերիժառու սրբազան կռիվ, փրկարար կռիվ...

Բայց խոհեմութիւնը սպասել էր պատուիրում։ Սակայն կատաղած ֆէդայիին կռուի շեմքում զսպելը այնքան էլ հեշտ չէ։ Շատերը կամացուկ իրենց տեղերից սպրտում են, նախայարձակների շարքերն են մտնում։ Ամէն մէկը ցանկանում է առաջինը նետուել թշնամու բանակի մէջ. ամէն մէկը ցանկանում է առաջին գնդակը ինքը շեշտի թշնամու կրծքի մէջ։

Խմբապետը հրացանը ձախ ձեռքն առաւ ու աջով մերկ խանչալը բարձրացրեց։ Դա նշան էր, որ պէտք էր լռել, որ ինքը ուզում է խօսել։ Բոլորս շունչներս քաշեցինք... Նա սկսեց.

„Ընկերնե՛ր, ֆէդայինե՛ր, ահա վճռական րոպէն. յիշեցէք ձեր կոչումը. թշնամին յիրաւի բազմաթիւ է, բայց յոյս ունեմ, որ չէք ընկճիլ նոցա գնդակների տարափի տակ։ Վրէ՛ժ, ընկերնե՛ր. վրէ՛ժ մեր սուրբ ու ամայացած Հայրենիքի. վրէժ անպատուած քոյրերի, մայրերի ու սրբապղծուած նուիրական վայրերի... Տղերք ջա՛ն, ստրուկ ենք ծնուել, բայց ստրուկ մնում են միայն նրանք, որոնք կամենում են ստրուկ լինել. մենք յեղափոխականներ ենք, թանկ ծախենք մեր ազատ կեանքը։ Ընկերնե՛ր, կռուենք միասի՛ն, ապրենք միասին, մեռնենք միասին“...

— „Կեցցէ՛ յեղափոխութիւնը, կեցցէ՛ մեր խմբապետը, որոտաց խումբի պատասխանը. երգւում ենք յանուն Դաշնակցութեան և յանուն ֆէդայիի մեծ կոչման՝ կռուել մինչև մեր վերջին շունչը. թող մեր ՝մահը վրէժի մի նոր ուխտ լինի մեզնից յետոյ եկող խմբերին“...

Դռան ճեղքերից նկատելի էր զինուորների վազվզոցը, իսկ հանդէպի քարերից, որոնք 30-40 քայլ հեռու էին մեր տնից, կարմիր ֆէսեր էին երևում և հրացանի փողեր՝ ուղղուած դէպի մեր դուռը։ Գիւղը շրջապատուած էր։ Տաճկական զինուորական փողը երկրորդ անգամ կռիւ էր ազդարարում...

Յանկարծ կտուրն ի վայր 3-400 հրացան որոտաց։ Կռիւը սկսուեց։ „Ուռռա՛,“ որոտաց մեր խումբը և կտուրն վեր միահամուռ մի քանի անգամ արձակեց։

Գոմը մթնեց. ծուխն ու հնամեայ հողէ կտուրի փոշին ներսը լցրել էր։

Այդ միջոցին առաջին տասնեակը, որը գոմից դուրս էր եկել և պատի մօտ թշնամուց անկատելի շարուած՝ խմբապետի հրահանգին էր սպասում, անմիջապէս թշնամու առաջին դիրքերի վրայ յարձակուեց, նախապէս կայացած զինուորական խորհրդի միաձայն վճռի համաձայն։

Գոմը հետզհետէ դատարկուում էր։ Տղերքը գնդակների տարափի տակ թշնամու վրայ էին վազում։

Այժմ դուրսն էինք։ Թշնամին վազուց շրջապատել էր գիւղը և խոտի, աթարի դէզերի, կտուրների, քարերի ու աղբակոյտների վրայից էր կռուում։ Մեզ մնում էր իւրաքանչիւր քայլը թշնամուց արիւնով խլել։ Հարկաւոր էր գիւղի մի ծայրից մինչև միւսը, դէպի մօտակայ բլուրը, դիրքերը խլելով, ճանապարհ բաց անել։

Ընդհարումը կատաղի էր։ Մեր տղերքը այս ճակատագրական կռուում աննման էին։ „Ուռռա՛, տղերք ջան, վրայ տէ՛ք“, խրախուսում էին տասնապետները։ Եւ իւրաքանչիւր տասնեակ տասնապետի հետ միասին այս ու այն դիրքերի վրայ էր յարձակուում, որտեղից լսւում էին տաճկական սալվաթները։ Միւսիւլման պետերը աշխատում էին ոգևորել իրենց շարքերը այդ նուիրական բառով։

Կռիւը, հետզհետէ ծաւալելով, աւելի ու աւելի էր տաքանում։ „Կռուեցէ՛ք տղե՛ր, կռուեցէք քաջ քաջ“, հնչում էր որոտագին մեր սիրած ռազմերգը...

Մինչև գիւղի միւս ծայրը, որտեղից դաշտն էր ընկըսւում, դէպի մեր բռնելիք բլուրի դիրքերը՝ իւրաքանչիւր դիրքում թշնամու դիակները 10-նեակներով կարելի էր համարել։ Մի քանի տեղ էլ տաճիկ կանոնաւոր զինուորները զէնքերը վայր թափել՝ պաղատագին կեանքը իրրև պարգև էին աղերսում. „Ալլահ աշգընայ, գնայըն բէնի, օլագնա դիւշմիշըմ“։

Մեր ընկերներից չկար մէկը, որ մէկ կամ մի քանի ասկեար կամ քիւրդ Մահմէդի գիրկը ուղարկած չլինէր։ Գոմի դռան մօտ մեր ընկերոջ (տասնապետ Գրիգոր) դիակի վրայ թշնամու 6 հատ դիակ փռուեց։ Գոմից դուրս գալու ժամանակ տասնապետ Գրիգորը զարկուում է։ Դարվիշ աղան, որ միևնոյն գիւղի տէր-աղան էր, նահատակի հրացանը վերցնել է կամենում։ Հէնց որ կռանում է վերցնելու, մեր ընկերներից մէկի գնդակը ճակատից ընծայ է ստանում. չէ՞ որ հրացանի հետ գնդակ էլ էր հարկաւոր մեր դէմ կռուելու համար... Աղայի եղբայրը շտապում է սպանուած եղբօր դիակը կռուից դուրս քաշելու. նա էլ անմիջապէս պառկում է եղբօր դիակի վրայ։ Յետոյ Դարվիշ աղայի երկու որդիքն են շտապում իրենց հարազատների վրայ պառկելու։ Վերջապէս մայրն ու հարսը վազում են ծանր կորուստը ողբալու. նրանք ևս միևնոյն վիճակին են արժանանում. բայց չգիտենք, մե՞ր գնդակների պատահական զոհն են վերջին երկուսը թէ՞ թշնամու։

Կատաղի յարձակման առաջ թշնամին տեղի տուեց, աջ ու ձախ դիակներ թողնելով։ Խմբապետի հրահանգի համաձայն, մեր 4 տասնեակները, գիւղի ծայրին պահակներ թողնելով, կռուելով, շտապում են դէպի բլուրը. գետը յաջողութեամբ անցնելով, $^3/_4$ ժամում դաշտը կտրում են և բլուրին տիրանում։

Այնուհետև ուղղակի անկարելի էր մեզ համար բարձր դիրքերին հասնելը, որովհետև տաճկական կանոնաւոր ձիաւորներն ու համիդիէ քիւրդերը վաղուց գրաւել պրծել էին այդ տեղերը։ Այսպիսով՝ երկու մասի բաժնուեցինք. մեր մի կէսը գիւղումն էր կռուում, իսկ միւս կէսը սարերում։

Գիւղից դուրս, սարի կռուում, մեր և թշնամու դիրքերի հեռաւորութիւնը 1000-1500 քայլ էր։ Անընդհատ հրացանաձգութիւնը, որ մինչ երեկոյ շարունակուեց, սպստիկ ձանձրալի էր։ Եւ ի՞նչ. թշնամին բարձր էր և անհամեմատ աւելի լաւ դիրքեր ունէր, քան թէ մենք։ Բլուրի մակարդակը մօտաւորապէս $^1/_4$ քառակուսի վերստաչափ էր, և թշնամին մեզնից անհամեմատ շատ և շատ. ուստի մենք ստիպուած էինք ամէն կողմից հսկել թշնամուն, որպէս զի նա բլուրին չկարողանար մօտենալ և որովհետև մօտիկ կռուում մենք կը յաղթէինք, այդ պատճառով մեր կողմից կռիւը պաշտպանողական էր և այնչափով էինք գնդակ արձակում, որչափ որ անհրաժեշտ էր նրանց գրոհը արգելելու համար։ Բայց և այնպէս ձանձրոյթից ազատուելու համար երբեմն թշնամու հետ հանաքներ էլ էինք անում. երբեմն դադարեցնում էինք հրացանաձգութիւնը և երբեմն այնպէս արագ ու շուրջանակի զ ա լ պ ե ր էինք տալիս, որ ողորմելիները քարից գլուխ բարձրացնելու ժամանակ չէին գտնում...

Արևը հետզհետէ իջել էր. իսկ թշնամին մեր կողմից

դէպի արևմուտք գտնուող դիրքերումն էր կետրոնացել։ Այդ պատճառով արևը սկսել էր մեզ խանգարել նշան բռնելիս. շատերը մեզնից նոյնիսկ դադարեցրին հրացանաձգութիւնը և հրացաններ էին սրբում։ Թշնամին սիրտ առաւ. հաւանօրէն, մեզ կամ կոտորուած, կամ վհատուած էր կարծում։ Ժամը 6-ին, երբ մութը արդէն գետին էր կոխել, յանկարծակի սալվա թանչելով մեր վրայ գրոհ տուին։ Խմբապետը սուլիչով մեզ իր մօտ հրաւիրեց, մենք էլ ընդհանուր ուժով, դիրքերը թողած, հրացաններ արձակելով, վրայ պրծանք։ Մի քանի քայլ ևս, և իրար անցանք, խառնուեցինք։ Հրացան բռնեցնելը անկարելի էր, իսկ խանչալը թշնամու այսպիսի բազմութեան մէջ խիստ անյուսալի զէնք է, և շատ սուղ պէտք է նստէր մեզ այդպիսի մի կռիւ։ Մնում էր ռէվոլվէրը. Մաուզէրի 10 հարուածեանը անփոխարինելի էր այստեղ։ Տղերքը, ռէվոլվէրները հանած, աջ ու ձախ անխնայ կրակում էին։ Բոպէն սոսկալի էր. կռիւը կատաղի... Այլևս ապրելու յոյսը ցնորք էր...

Եւ՝ յանկարծ մեր ազատարար փողի ձայնն ենք լսում. „պառկել“ —աղդարարում էր խմբապետը։ Բոպէն մեզ համար շատ թանկ արժէր. 5 բոպէ ևս, և մենք կորած էինք, բայց „պառկելու“ այս ազդը մեզ փրկեց։ Բոլորս պառկեցինք. այժմ պարզ էր, որ կանգնողները թշնամիներ էին։ Խմբած թշնամին ոչինչ չհասկացաւ այս ճարպիկ ռազմագիտական աղդից. միմեանց թշնամի կարծելով, նրանք սկսեցին փոխադարձաբար կոտորել իրար, մենք էլ մեր պառկած տեղից մեր ռէվոլվէրներով պակասը լրացրինք։

Զարդը կատարեալ էր. մեր պառկած ընկերների վրայ թշնամու դիակները հնձուած հասկերի նման վայր էին թափւում։

Զեմ՝ յիշում որքան ժամանակ տեւեց այս հունձը. այնքան է միտքս, որ ահաբեկուած թշնամիների յետին շարքերը երկու մասի բաժանուած, դիւահարների նման, վայրենի աղաղակներով իփախուստ դարձան սարն իվայր, համարեա գլորուելով։ Անմիջապէս մենք ևս վեր կացանք ու, երկու մասի բաժանուած, ուռռաներով նրանց յետևից վազեցինք։

Դեռ ևս երկար պէտք է հետապնդէինք, եթէ երկրորդ ազդը մեզ խմբապետի մօտ չհրաւիրէր։ Բոլորս նորից մեր խմբապետի շուրջն էինք։ Տեսարանը խիստ յուզիչ էր։ Սկսեցինք գրկախառնուել և համբուրուել խմբապետի և իրար հետ... Ապա թշնամու բարձր դիրքերը շտապեցինք, և որպիսի ուրախութի՜ւն,— խմբապետի օգնականը, որ գիւղում և գիւղից դուրս՝ խոտանոցներում, կռուող ընկերների հետ էր, մնացած թշնամուն դիրքերից հալածելով, վաղուց գրաւել էր նրանց տեղերը և մեզ էր սպասում։ Ակամայ բոլորիս կրծքից „կեցցէ՛ Յեղափոխութիւն, կեցցե՛ն մեր պետերը“ դուրս թռաւ։

Սարերում ամէն ինչ լուռ ու հանգիստ էր։ Գիւղի կողմից դեռ ևս հրացանաձգութեան ու ուռռաների ձայն էր լսւում։ Այդ մեր մնացած ընկերներն էին, որոնք դալիս էին մեզ միանալու... Ճանապարհները բաց էին. դէ՜հ, ֆէդայի՛, ուր ուզում ես գնա...

Խաստուր գիւղը և ընդհանրապէս Ալաշկերտի միւս հայ գիւղերը ամենևին չեն վնասւում և ոչ էլ թալանւում։ Պատմում են (հաստատ և վստահելի աղբիւրներ), որ քիւրդերը Խաստուրից և մօտակայ Զէտկան գիւղից տաւար են տանում։ Կռւի միւս օրը Էրզրումից հեռագրով կանչուած զօրքը հասնում է Խաստուր։ Միւշիրը հարցուփորձ անելուց յետոյ կանչում է Թօփրագ-Գալէի զօրքերի հրամանատարին և մի լաւ ծեծելուց յետոյ կռները կապում՝ Էրզրում է ուղարկում։ Վալին Էրզրումից հեռագրով հրամայել էր դիակները չհաւաքել, թէ մերոնց և թէ իրենց։ Միւշիրը հարցնում է Թօփրագ-Գալէի հրամանատարին.

— Այս ի՞նչ դիակներ են։

— Մօտ 400 ֆէդայիներ կային. մենք յարձակուեցինք նրանց վրայ, նրանք թուեր ունէին, կոտորեցին մերոնց և թռան։ Գիւղում ընկածները ոչ թէ ֆէդայիներ են, այլ տեղացիք. մեր գնդակը ֆէդայիներին չէր ընտրում. նրանք թռան գնացին։

— Ո՞ւր էին ֆէդայիները։

— Խաստուր, Խաչիկ վարժապետի տանը։

— Կանչեցէ՛ք Խաչիկին։

— Խաչիկին սպանեցին. Դարվիշ աղան է խանչալով սպանել։

— Քէօփայօղլիք, ինչո՞ւ սպանեցիք. եթէ ձեր տունը գային ֆէդայիները, չէի՞ք ընդունիլ—և հրամայում է միւշիրը, որ անմիջապէս թէ խաստուրցիներին և թէ զէտկանցիներին վերադարձնեն բոլոր տարած աւարը, թէ տաւարը և թէ ոչխարը։

Խաչիկ վարժապետին, նախ քան կռիւը, գիւղում խանչալով սպանում են. սպանում են և Խաչիկի եղբօրը։ Խաչիկը ընտանիքով բողոքական էր։

Յիշատակելի է և մի օրիորդի քաջութիւնը։ Երբ գոմումն էինք, այս օրիորդը մեզ համար ջուր էր բերում. նախ քան կռիւը, երբ բոլորը (գիւղացիները) փախել, դէս ու դէն էին ցրուել, Խաչիկն էլ չկար, օրիորդին խնդրեցինք, որ ինքն ևս հեռանայ. „Ո՛չ, պատասխանեց նա, ես պէտք է ձեզ հետ լինեմ. կամ ապրել ձեզ հետ, կամ ձեզ հետ մեռնել“... Օրիորդը այժմ ազատ է, և ապահով դրութեան մէջ։

Մատնութեան կեղտոտ գործը խաստուրցի Յովսէփն է կատարել։

Հայ գիւղացիների ասելով, թշնամու կողմից ընկել են, բացի Դարվիշ աղայից, իր եղբօրից և երկու որդիներից, 2 հատ շէյխ, Ալի փաշայի տղան, 3 հատ հազարապետներ և շատ հարիւրապետներ, յիսնապետներ և տասնապետներ։

Ահա և մի քանի տեղեկութիւններ քիւրդական աղբիւրներից.

Տանիքի վրայ մեր թշնամիներից 35-50 մարդ է զարկուել։ 9 հատ շէյխ է ընկել, որոնց ոտքի կոխած տեղը սուրբ է մահմեդականների համար։ 10-15 նշանաւոր և ազդեցիկ քիւրդ բէկեր են սպանուել։ 40-50 ասկեար զարկուում են սարի կռւում, իսկ քիւրդ՝ աւելի շատ։

Բոլոր սպանուած թշնամիների թիւը, ոմանց ասելով, 350 է, ըստ ոմանց էլ՝ մօտ 400։

Երեկոյեան կռւի միջոցին մի գնդակ մտնում է պատերազմական փողի բերանը այն ժամանակ, երբ զինուորը փչելիս է լինում, և փողի ծայրը փրցնելով՝ զինուորի ծոծրակից դուրս է թռչում։ Քիւրդերը այժմ առած են դարձրել, թէ ֆէդայիները, բացի թուեր ունենալուց, գիշերն էլ ցերեկւայ պէս պարզ տեսնում են։

Կռւում թշնամու կողմից մասնակցել են այս ու այն կողմից հաւաքուած 800 հոգի զօրք (հետևակ), 300

հոգի կանոնաւոր հեծելազօրք և 5 աշիրէթ (ցեղ) քիւրդ. մինչև անգամ Սիփկանցի քիւրդեր էլ են մասնակցել կռուում։

Քիւրդերը բողոքներ են բարձրացրել և սպառնացել են այն տաճիկներին, որոնք կռուի պատճառ են եղել, թէ — „ջա՛նըմ, նրանք ջան ֆէդայի, դաչաղ մարդիկ են. ինչո՞ւ համար կռուի առիթ էք տալիս. գալիս են թէ գնում են, մեր լ՞ինչ գործն է. ուր ուզում են գնան, ինչ ուզում են թող անեն, չէ՞. որ մեզ չեն վնասում, ոչ մեր մալն են տանում և ոչ էլ մուլքը։ Դուրս ենք գալիս կռուում հետները, մեր տունն են քանդում։ Լա՞ւ եղաւ, որ տներս քանդեցին, այսքան մարդ ջարդեցին, իրենք էլ փառաւորապէս անցան իրենց գործին գնացին“...

Վերջացնում եմ նամակս մեր նահատակուած ընկերների ցանկով.

Տամնապետներ		*Տարեկան*
1.— ՄԻՀՐԱՆ	Կեսարացի	28
2.— ԳՐԻԳՈՐ	Սիփանցի	26
3.— ՀԱԶԻ	Տիգրանակերտցի	50
4.— ՊԵՏՕ	Խնուսցի	30
5.— ԱՒԵՏԻՍ օգնակ.	Էրզրումցի	37
Զինուորներ		
6.— ՅԱՐՕ	Կարճկանցի	26
7.— ԿԱՐԱՊԵՏ	Հաւթուանցի (պարսկ.)	27
8.— ՋՆԴՕ	Խլաթցի	22
9.— ԼԵՒՈՆ	Բուլանըխցի	22
10.— ՄԵՍՐՈՎԲ	Մակուեցի (պարսկ.)	25
11.— ՍԱՐԳԻՍ	Բուլանըխցի	23
12.— ՅՈՎՀԱՆՆԷՍ	„	25
13.— ՂՈՒԿԱՍ	Խաստուրցի	23
14.— ԽԱՉՕ	Սիփանցի	29
15.— ՀԱՄԲԱՐՁՈՒՄ	Կովկասցի զինուոր	23

—

ԾԱՆՕԹ.— Խմբագրութիւնս ստացել է նոյն նիւթի մասին և մի ուրիշ ընդարձակ թղթակցութիւն, որ չենք զետեղում „Դրօշակ“ում տեղի սղութեան պատճառով միայն։ Սակայն կարևոր ենք համարում շեշտել, որ թէ այս երկու թղթակցութիւնները և թէ զանազան աղբիւրներից մեր ստացած բոլոր վերջին տեղեկութիւնները միաձայն հերքում են „Դրօշակ“ի դեկտեմբերի համարում լոյս տեսած նամակի այն մասը, որ վերաբերում է հայերի կրած կորուստներին Խաստուրում։ Հարիւրաւոր մարդիկ սպանուել են ոչ թէ հայերի, այլ զօրքերի ու քիւրդերի կողմից, և հայերի մէջ կոտորածներ տեղի չեն ունեցել, ինչպէս սխալմամբ հաղորդուած էր թէ օտար թերթերում և թէ մեր նախորդ թղթակցութեան մէջ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

1899

ԱՆԳԼՕ-ՏՐԱՆՍՎԱԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ.— Տխուր, սրտաճմլիկ հանգամանքներում էր, որ վրայ հասաւ դարավերջի վերջին թուականը։ Ամբողջ քաղաքակրթուած մարդկութիւնը սոսկումով ու լարուած ուշադրութեամբ դիտում էր պատերազմի բեմը, ուր կատարւում է մի վերին աստիճանի անիրաւ, մի ըմբոստեցուցիչ մենամարտ։ Երբեք բրիտանական դրօշը այդչափ չէր արատաւորուել լուսաւոր մարդկութեան աչքում։ Մարդակեր բարբարոսներից չէին բօէրները, այն բարբարոսներից, որոնց մինչև օրս սիստէմաբար ու մտրակի ուժով հպատակեցրել էր Անգլիան, և ոչ էլ ասիական բռնապետութեան մի ժայռ էր Տրանսվալը, որի խորտակելը կարող էր բերկրանք պատճառել ազատութեան բոլոր բարեկամներին,— այլ խաղաղ, բարգաւաճող հանրապետական մի երկիր։ Ահա թէ ինչու ողբալի է իրողութիւնը։ Բայց աւելի ևս ողբալի է դառնում նա, երբ մտածում էք, որ այդ քստմնելի ողբերգութեան հեղինակը Մեծ Բրիտանիան է—մեծ՝ փողով ու զօրութեամբ, բայց և մեծ՝ ազատութեան ու արդարութեան սկզբունքներով,— մի երկիր, ուր մարդկային անկախութեան գաղափարը ամենամեծ յաղթանակներն է արել մինչև օրս և որի վրայ մատով են ցոյց տալիս ազատագրական պայքարը մղող ցամաքային լիբերալիզմի ամենածայրայեղ ներկայացուցիչներն անգամ։

Զվարակուենք սակայն յոռետեսութեամբ և դիտենանք ճշմարիտ, ռէալիստական բացատրութիւն տալ հասարակական փաստերին։ Մխիթարուենք նրանով, որ միջազգային պատերազմների երևոյթը ժամանակակից քաղաքակրթութեան մէջ — ինչպէս և գրեթէ ամէն ժամանակ — ժողովրդային ընդհանրութեան իղձերի ծնունդ չէ, այլ համեմատաբար չնչին փոքրամասնութեան շահերի արտայայտութիւն։ Այդ փոքրամասնութիւնը երբեմն թագաւորն էր կամ իշխանն ու աւատականը իր շքեղապատով, այսօր փողատէր կաստան է, որ ծարաւ է նորանոր նուաճումների, լայնածաւալ շուկաների, ուր կարող է արտահանել յարաճուն կապիտալիզմի անսպառ բարիքները։ Մխիթարուենք նրանով, որ այնքան քստմնելի պատերազմը բրիտանական ազգի ներքին պահանջը չէր, այլ որ նրա նիւթողն էր պատերազմասէր, իմպերիալիստ կուսակցութիւնը՝ Չէմբերլէյնները, Սըսիլ Ռոդսները, որոնց վրայ և ծանրանում է ներկայ ճգնաժամի ահռելի պատասխանատուութիւնը։ Իմպերիալիզմի ուրուականն էր, որ թև էր տալիս Չէմբերլէյնների ոճրագործ քաղաքականութեան. պանբրիտանիզմի կամ համաբրիտանական տիեզերական իշխանութեան տենդն էր, որ առաջ բերեց անգլօ-տրանսվալեան ընդհարումը։ Պանբրիտանիզմ և իմպերալիզմ միևնոյն աղբիւրն ունեն — ատելի շովինիզմը, որ, ինչպէս ամէն տեղ, Անգլիայում ևս ունի կողմնակիցներ հասարակութեան բոլոր խաւերի մէջ։ Խաղաղասէր, արմատական կուսակցութիւնը անզօր էր. նա չկարողացաւ դիմադրել շովինիզմի յորձանքին. չկայ Գլադստոն...

Անգլիայի վարկը ծանր, անբուժելի հարուածներ կրեց. բրիտանական զէնքի համբաւը չարաչար տուժեց։ Պատերազմը դեռ շարունակւում է և մարդիկ ճանճերի պէս կոտորւում են երկու կողմից։ Ծանրապէս խոցոտուած բրիտանական ինքնասիրութիւնը գերմարդկային ճիգ է թափում՝ պաղարիւն ու վճռական մնալու։ Արտասովո՛ր, բացառիկ վայրկեան... Երբե՛ք անագորոյն բախտը այդքան դառն փորձութեան չէր ենթարկել ծովերի միահեծան թագուհուն։

—

ԼԱ ՀԷՅ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ.— Քաղաքակիրթ մարդկութիւնը չէր կարող ներել մանաւանդ, որ Տրանս-

վալի պատերազմը հեղինակեց մի այնպիսի ժամանակ, երբ միջազգային խաղաղութեան համագումարի նիստերը դեռ նոր աւարտելով՝ ժողովուրդները ակնկալում էին կիրառութիւնը այդ համագումարում հռչակած սկզբունքների։ Անգլիան այդ ժողովի մէջ միջնորդ դատարանի եռանդուն պաշտպաններից մէկն էր. բայց, ինչպէս տեսանք, նա ինքը հաւատարիմ չմնաց այդ սկզբունքին և մինչև օրս կատաղութեամբ յետ է մղում ամէն միջնորդութիւն։

Անգլո-տրանսվալեան պատերազմը մի պերճախօս ապացոյց էր արդէն, որ յանուն խաղաղութեան արձակուած կայսերական կոչը էապէս ձայն բարբառոյ պիտի մնար, իբրև անիրագործելի երազանք։ Այդ հանգամանքը մենք շեշտեցինք դեռ մի տարի առաջ, այս միևնոյն էջերում։ Ժողովը պիտի գումարուէր — ցարի առաջարկութեան համաձայն — զինաթափութեան համար։ Բայց շատ շուտ համոզուեցին, որ այդ անունը միանգամայն անհամապատասխան է ակնկալող հետևանքներին և սկսեցին անուանել խաղաղութեան ժողով։ Այսօր լաւ կը լինէր անուանել սոսկ „Լա Հէյի խորհրդաժողով“։

Զինաթափութեան խնդիրը, որ ցարի մանիֆէստի կետրոնական միտքն էր՝ լիակատար ֆիասկո կրեց։ Ձևակերպուեց միայն մի ցանկութիւն, որ ոչ ոքի չէր պարտաւորեցնում։ „Համաժողովը ընդունում է, որ ներկայումս աշխարհի վրայ ծանրացող միլիտարիզմի սահմանափակումը վերին աստիճանի ցանկալի է ժողովուրդների նիւթական ու հոգեկան բարեկեցութեան աճման համար“։

Ապարդիւն անցան վիճաբանութիւնները այնպիսի խոշոր հարցերի մասին, որպէս՝ զօրքի ու նաւատորմի սահմանափակում, պատերազմական բիւջէի կրճատում, պատերազմական խիստ կատարելագործուած միջոցների գործածութեան արգելում և այլն։

Իհարկէ, բոլորովին ապարդիւն չ՝եղաւ Լա Հէյի խորհրդաժողովը. նա ունի և իր դրական մասը, որ վերաբերում է պատերազմները աւելի մարդասէր դարձնելու խնդրին։ Այդպէս՝ ստորագրեցին մի քանի դաշնագրութիւններ. 1. Միջազգային ընդհարումների խաղաղ լուծում (միջնորդ դատարան), որ ստորագրեց 16 պետութիւնների կողմից միայն (ընդամենը 26 էին ներկայ). 10-ը մերժեցին։ 2. Տարածել Ժընէվի դաշնագրութիւնը (1864-ին կապուած) նաև ծովային պատերազմների վրայ. դրա համեմատ՝ պատերազմում վիրաւորուածների ու հիւանդների համար սահմանուած նաւերը պէտք է վայելեն առանձին հովանաւորութիւն, ինչ ազգութեան և որ պատերազմող կողմին էլ պատկանեն նրանք։ (Այդ որոշումը ստորագրեցին 15 պետութիւններ, չստորագրեցին 11)։ 3. Խորհրդաժողովը ընդարձակելով Պետերբուրգի դաշնագիրը (1868)՝ արգելում է գործածել պատերազմի միջոցին այնպիսի պայթուցիկներ, որոնք լցուած են վառուող, բռնկող նիւթերով. արգելում է գործածել այնպիսի գնդակներ, որոնք պայթում են մարդու մարմնի մէջ, և այնպիսի զէնքեր, որոնց միակ նպատակն է՝ հեղձուցիչ գազեր տարածել օդի մէջ։ Անգլիան և Հիւսիսային Ամերիկան ձայն տուին հակառակ այդ արգելման՝ պատճառաբանելով, որ պայթուցիկ միջոցները (dum-dum) և գազերը աւելի սարսափելի չէին, քան պատերազմի ուրիշ միջոցները։

—

ՖՐԱՆՍԻԱՆ զգալի կերպով բարձրացաւ 1899-ին։ Ֆէլիքս Փօրի մահից յետոյ հանրապետութեան նախագահ ընտրուեց Լուբէ։ Հաստատուեց մի զուտ հանրապետական կառավարութիւն, յանձինս Վալդէկ Ռուսօյի, Միլլերանի, Դէլկասէի և այլն, որ տոգորուած է ներքին ու արտաքին խաղաղութիւնը ապահովելու տենչանքով։ Դրէյֆուսեան մղձաւանջը, որ ջլատել էր ամբողջ ներքին ու արտաքին քաղաքականութիւնը, բաւարար լուծում ստացաւ։ Դրէյֆուս արձակուեց։ Կառավարութիւնը ստանձնել է „Հանրապետութեան պաշտպանի“ կոչումը և արկադրուած է կռիւ մղել հակահանրապետական տարրերի՝ նացիոնալիստների, արքայականների ու անտիսեմիտների դէմ, որոնք պարզապէս արգելք են լինում երկրի խաղաղ ու բնականոն զարգացման։ Այդ նոյն տարրերն են, որ Անգլիայի նեղ դրութիւնից օգտուելով՝ գրգռում են հասարակական կարծիքը Անգլիայի դէմ, յիշեցնում են Փաշօդայի ծանր, վիրաւորական դէպքը և ձգտում են ընդհարում առաջացնել երկու մեծ քաղաքակիրթ ազգերի մէջ։ Բարեբախտաբար կառավարութիւնը արհամարհում է շովինիստների ցնորքները և հետևում է հաշտարար քաղաքականութեան Անգլիայի նկատմամբ։ Մինիստր Դէլկասէի ճառը, որ մօտ երկու ամիս առաջ պարլամենտական ամբիոնից դատափետում էր նացիոնալիստների հականգլիական պրոպագանդը՝ մի լաւ ապացոյց է այդ հաշտարար ընթացքին։

Հայերի վերաբերմամբ ևս զգալի փոփոխութիւն է առաջացել Ֆրանսիայի հասարակական կարծիքի մէջ,— Ֆրանսիական բոլոր շրջաններում հայկական համակրութիւնները օր աւուր աւելի ու աւելի շեշտւում են, լսւում են անէծքներ ու բողոքներ Հանօտոյի հայակործան քաղաքականութեան դէմ և երևում է տրամադրութիւն՝ քաւելու հին մեղքերը։

Առհասարակ մխիթարական նշաններ են նշմարւում այժմեան Ֆրանսիայում։ Կազդուրելով ներքին ծանր վէրքերից, որոնք քիչ առաջ սպառնում էին տակն ու վրայ անել ամէն ինչ և արատաւորել ընդմիշտ հանրապետութեան վարկը, Ֆրանսիան թարմացած՝ բարձրանում է նորից ռամկավարական սկզբունքների ու քաղաքակրթութեան սանդուխքով և պատրաստւում է մօտ ապագայում ծաւալել աշխարհի առաջ իր փայլուն հանճարի արգասիքը — համաշխարհային ցուցանդէսը։

—

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ արևելեան քաղաքականութիւնը խոշոր և աջող քայլեր արեց։ Սուլթանը վերին աստիճանի հաճոյակատար ու զիջող է հանդիսանում Վիլհելմ կայսրի նկատմամբ։ Գերմանիային դիւրութիւն է տրւում Փոքր Ասիայում և Միջագետքում երկաթուղային ճիթխարի ծրագիրներ իրագործելու։ Այդ հանգամանքը չի կարող չշարժել ուրիշ պետութիւնների և մանաւանդ Ռուսիայի շահախնդրութիւնը։ Վերջինն զգում է, որ գերմանական ազդեցութիւնը Բոսֆորի ափերում հսկայաքայլ աճում է իվնաս իր սեփական ազդեցութեան։ Մրցակցութիւնը բնականօրէն կը ծնի խիստ հակամարտութիւն այդ երկու պետութիւնների մէջ։

—

ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ Եւրոպական երկիրներում 1899-ին, ինչպէս միշտ, կլանուած էր տնտեսական կամ ազգային հակառակութիւններով։ Դրու-

թիւնը ալէկոծ էր ամէն տեղ, բայց առանձնապէս ներքին ու տենդոտ կերպարանք ունէր նա երկու երկրներում՝ Ֆրանսիայում՝ դրէյֆուսեան ու հակադրէյֆուսեան պայքարի շնորհիւ, և Աւստրիայում, ուր՝ բացի տնտեսական դասակարգային կռիւներից՝ այլևայլ ցեղեր շարունակում էին մղել փոխադարձ յուսահատ պայքար և կրծել հասարակական-պետական մարմինը: Տարւայ ընթացքում երևացին մի քանի լուրջ աշխատութիւններ, որոնք շեշտելով այն միտքը, որ թագաւորի անձնաւորութիւնն է միայն կարողանում սանձահարել ներքին երկպառակութիւնները, գուշակում էին աւստրիական լայնածաւալ պետութեան բ ա ժ ա ն ո ւ մ ը Ֆրանց Իոսիֆի մահից յետոյ. արդէն այժմից իսկ ոմանք տալիս են բաժանման նախագիծը…

—

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ կռիւը Եւրոպայում զօրեղ թափեր ունեցաւ 1899-ին: Մի կողմից՝ իշխող տարրը բռնի, բացառիկ միջոցներով՝ ձգտում էր կրճատել աշխատաւոր ընդհանրութեան իրաւունքները — իրաւունք ձայնատւութեան, ազատութիւն խօսքի, մամուլի, ժողովների, իրաւունք գործադուլների, — միւս կողմից տեսնում ենք հալածւածների գերագոյն պայքարը, որ մղւում էր ամէն տեղ մեթոդիկ, կազմակերպւած և նպատակին գիտակից ձևով:

Աշխատաւոր դասակարգը միշտ աւելի և աւելի հաստատապնդում է իր դիրքը, շեշտում է իր ուժը՝ մի տեղ միջամտելով յանուն մարդկային բռնաբարւած պատւի (Ֆրանսիա), մի այլ տեղ բողոքելով ընդդէմ պատերազմի (Անգլիա) և ամէն տեղ հանդիսանալով իբրև հզօր, կորովի և անհրաժեշտ գործօն հասարակական առաջադիմութեան:

Ժամանակակից հասարակական կարգերի փլատակումը անխուսափելի է. այդ զգում են ամէնքը. վաղ թէ ուշ բուրժուազական քաղաքակրթութիւնը՝ անընդունակ պահպանելու իր սահմաններում ապրող ազգերի խաղաղ, բնական առաջադիմութիւնը՝ պիտի տեղի տայ — է վ օ լ ի ւ ց ի ա յ ի անդրդւելի օրէնքի զօրութեամբ — մի ն օ՛ր քաղաքակրթութեան…

ԹԻՒՐՔԻՈՅ ՇՈՒՐՋԸ

* * *

ՆՈՒՐԵԱՆԻ ՄԱՀԸ. — Ներսէս պատրիարքի մահւան օրը, երբ ամբողջ ազգը լաց կ՚ըլլար քողոքական պատւելի մը այն մեծ մահին առթիւ ամբողջ ազգին սրտաբուխները կ՚ամփոփէր սա եռակ բնաբանին մէջ, „Եւ Իսրայէլ մեծ մարդ մը կորսնցուց այսօր“:

Դժբախտաբար հայ ազգին մէջ շատ քիչ մարդու գերեզմանի վրայ պիտի արտասանուի ամբողջ ազգը հպարտ սարսռով մը յուզող այդ տեսակ պարզ ու վեհ բնաբան մը, — ոչ Աշըգեանի, ոչ Նուրեանի, ոչ Օրմանեանի, ոչ Արթին փաշայի: Անոնց մահը կը թեւադրէ ու պիտի թելադրէ մեզի ըսելու՝ „Այսօր հայ ազգը անպիտան մարդ մը կորսնցուց“:

Ուրեմն Նուրեանի վրայ լալու պէտք չունինք. մեր աչքերը անապատ կը դառնան անոր անշունչ դիակին առջեւ. թերեւս չէն սրտով մըն ալ կ՚ըսենք քերթուածին հետ Aime cette mort qui fait notre bonheur.

Նուրեանի ազգային ծառայութիւնները, իր չարիքներու հետ համեմատած, մեծ բաց մը կը ձգեն: Նուրեան կը պատկանի այն մարդիկներու ջուրին, որոնք, պետական վերելներ ընելու համար, ազգին տնէն զողութիւն մը, մատնութիւն մը պիտի ընեն, հաւատարմական ծառայութեան իբր ապացոյց իրենց վեհապետին: Նուրեանները այդպէս ծախած են իրենց փառասիրութեան շաւղին մէջ եւ այդպէս պղծած են իրենց աղաքական կուսութիւնը:

Նուրեանի ատողին քարծրանալը կըսկսի այն օրէն, երբ Մազհար փաշայի հետ Զէյթուն գացած էր. համոզելու համար „քաջորդի“ները, որ կառավարութեան հնազանդ մնան: Իմերձոյ ուղղակի իր խորհրդով եւ իր կնքահայրութիւնով շինուեցաւ արի լեռնականներու կշտին վրայ զօրանոցը որու մասին Սաոյ Մկրտիչ կաթողիկոս, մխիթարելու համար վարանոտ լեռնորդիները, կըսէր, մի վախնաք, օր մը կրնայ ծնգի ամբոցի տեղ ծառայել ան:

Ինչպէս կ՚երեւի, Նուրեանի արիւնը կը կուզար օսմանեան կայսրութեան գնահատելի ծառայութիւն մը մատուցանելու համար, ուստի իր բոլոր սատանութիւնը բանեցուց անոնց սիրտը ու միտքը շահելու որ չի հակառակին զօրանոցի շինութեան. „Դուք, կըսէր անոնց, երբ բոլորի գնդերը կը գնաք առուծախի, մահմեդականները կը նեղեն ու կը հալածեն ձեզ իբր աւազակներ. բայց երբ զօրանոցը մէյ մը շինուի, պիտի կարծեն որ հպատակութիւն յայտնած էք եւ սուս պիտի կենան. այս է նաեւ պատրիարքին փափաքը“… եւլն:

Զէյթունցիները, պարագաները քերուելով, հաւատալ ձեւացուցին այդ „հայ քրիստոնէի“ խօսքին:

Զօրանոցը կայ ու կը մնայ տխուր փառքի տխուր յիշատակ մը:

Մեր ազգուրոյն կեանքին մէջ, մեծ եւ անապաշաւ ոտնձգ մը եղած է ազգային առանձնաշնորհումներուն: Ամէն անգամ, երբ օսմանեան պետութիւնը փորձած է հայոց ազգասիրական ձգտումները եւ իրաւունքները քանաքարել, կուի առաջնապահ կարգած է Նուրեան էֆէնտի: Ուրեմն Դուռը որքան արիւն արցունք թափել տուած է, որովհետեւ իրենց կայսրութեան հզօր սիւներէն մէկն է որ կը տապալի. առանց որու „տրուալ ծառայ Ցիսուսի Քրիստոսի“ Բարդուղիմէոսը ողբալիօրէն հովկուլ մըն է:

Հայերը իրաւունք՝ ունին հարմնիք բռնելու, քանի որ թուրքամոլ Նուրեանի մահով մեծ ծակատամարտ մը շահեցան. նոր մըն ալ պիտի շահին եթէ Բարդուղիմէոսը, այդ „շաղաշուտ“ Յոհան եպիսկոպոսը — „եթէ արժան իցէ կոչել զնա եպիսկոպոս“, որ գիտէ „ի չորք անկեալ յոտս եւ իծեռս առնել առաջի թագաւորացն“ եւ ուղտի պէս „քասնալ զմեղս արքայի“, — հեռանայ մեր „լացի հովտէն“: Կուզե՞ս որ քեզ սիրենք, ո՛վ Բարդուղիմէոս, — գնա մեռիր:

Դաւաղիր բոլի անէացումէն նորը, մեր լեղուանուշ արցունքները երկիւղածութիւնով կը պահենք… Օրմանեանին ու Արթին փաշային, որոնք արդէն… հող կը հոտին:

Նուրեան, խոլթ զաւկի մը պէս, բնաւ չի սիրեցաւ ազգէն: Իր ազգային գործունէութիւնը էնորքիններու գիկզակ մըն է. գիտենք թէ ազգին որքան թեւ մանել տուաւ:

Անուրանալի է, որ վարչական տաղանդ ունէր, բայց օրին մը չարդարացուց այդ խստասիրտ, դաժան նայւածքով ու խոցոտ զգացումներով մարդը, թէ ինք Պեզճեանց երակներուն մէջէն լոյս աշխարհ եկած է: Անոր արիւնին մէջ թուրքական իրաւունք մը կար կարծես, եւ ո՞վ գիտէ որ օտարոտի հանդէպ մը չի ճակատագրեց „կարմիր-մահիկի“ դեր-նախագահը:

Նուրեանները կը մեռնին իրենց ետեւէն ձգելով ամօթալի յիշատակ մը—կուրծք մը պատւանշան՝ դաւաճանութեան դաշտին վրայ ծեռք բերւած:

Իր մահը, որ կարելի է ըսել իր էն ազգօգուտ ծառայութիւնն է, աղամային չեղաւ, անլեզու մեռաւ անապաշաւ կերպով:

Խունկի հաշիշի սիրահար, ամբողջ հոգեւորական լէշէրը, ծովերու մէջ դիակներու ետեւէ վազող ձկներու պէս, մամակցեր է յուղարկաւորութեան, բացի Սարաճեանէն, որ հողագնդի մէկալ երեսին վրայ, նոր աշխարհի մէջ… ա ր ե ւ ե լ ե ա ն անձակ քունը կը քաշէր:

Մեծաշուք յուղարկաւորութիւնները, „հոգոցները“ չեն տաքցներ նեխ ու պաղցուրտ մարմինը եւ չեն ազատեր նեէ հողաղէն արարած ազգային դատակնիքէն՝ նոյնիսկ մահւան գրկին մէջ: Ծուքենիկ ծրի փառքեր չհիւսենք անարժան գերեզմաններու վրայ:

Նուրեանի սիրտը աւելի պիտի սեւցնէ մութխաւարը ու տապանքը գերեզմանին որ անշարժութեան կնիքովը կը փակի:

Հողը ծանր գայ վրան…

* * *

ԲԻՒԶԱՆԴԻՈՆԻ ԽՄԲԱԳԻՐԸ. Բացարձակօրէն ամենւ տիպարներ քիչ ունեցած ենք, չացարձակօրէն զզուելի տիպարներ երկնքէ աստղերէն շատ: Ան վերջիններէն է ալ. Քէչեանը, որուն նեթէ քթաց մը դնէինք ու պատրցնէինք. ամէն մարդ պիտի ըսէր՝ անհաւասիկ արջ մը որ գէշ լզւած է:

Ան մարդուն մէջ սիրուն ոսկոր մը կը պակսի. մահւան քրտինքի պէս պաղ, երբեք չսիրուեցաւ հայ ժողովուրդէն: Միայն անձնաւորութիւն մը որ աւելի չ ա ր չ ի ի տպաւորութիւն կը ձգէ քան գրողի:

Ի՛նչ կայ խորհրդաւոր, որ ժողովուրդին սիրտը չէ քաշած աս մարդը. երբ կ՚անցնի, կարծես չորս կողմէն կը փախան, անհաւասիկ մարդ մը որ շուք չունի: Դժբախտ Շլէմիհլ մը:

Գոռհկութեան դրոշմ մը կայ վրան եւ անջնջելիօրէն:

Մենք չենք ուզեր ծանրանալ „Բիւզանդիոն“ի — որ իսկապէս Բիւզանդեան վէճերու բեմ մը եղած է — „ծննդոց“ին վրայ, բայց գիտենք թէ անոր խմբագիրը միւշէն, միակին մամնիշ խառվարար մը եղած է մեր ազգային կեանքի մէջ, ան ալ իր ջնուտի շահերուն համար:

Մարդ խածխծելու բնական մղում մը ունի: Իր ակռան փորձեց քանիցս Յեղափոխութեան դէմ. չէր գիտեր ի՞նչ դիրք առնել սուլթանին դիւր գալու համար: Ցայտնի կամ գաղտագողի միւս հայ լրագիրները ամբաստանեց եւ զօրով իր թերթին բաժանորդներ ստեղծեց մատնութեան սպառնալիքի տակ. ազգին ու պետութեան միջեւ շիլ ու շարաշահ դիրք մը բռնած՝ թաքուն սարսափի մէջ կը պահէ որոշ հասարակութիւն մը: Ահա ալ. Քէչեանի քախտախնդիր սխրագործութիւնները, ահա խմբագիր մը որ ազգային դժբախտութեան մէջէն իր ակօսը կը լայնցնէ մաքիավելական սխտէմով: Միթէ՞ խալիֆայի շուքին տակ մարդիկ ալ ատեւրի պէս անխոցելի են:

Շատերէն մէկը: Օր մը ոստիկանութեան ծրի գրպարտութիւն մը ըրած էր, միշտ իր շահուն համար: Ոստիկանութեան դիմում կըլլայ. ոստիկանապետը ինք ալ կըզգար որ ստոր մատնութիւն մըն է եղածը, բայց կ՚ըսէ, չեմ կրնար բան մը ընել, որովհետեւ անանկ մէկը ժուռնալ ըրած է ինծի որ, եթէ կարեւորութիւն չտամ, կարող է Եըլըզը տեղեկագրել. ես ալ իմ կաշիէս կը վախնամ:

Արդէն ամէն մարդ գիտէ թէ ի՞նչպէս նոր հրատարակուած թերթերուն առթիւ, — որպէսզի մրցակից չունենայ — լեզուն կախ ծզած կը վազէր կառավարութեան ականջը լեցնելու, որ անոնք անիշխանական եւ հասարակավնաս թերթեր են:

Աս արիւնքերան մարդը վերջերս իր թերթին „հազարթեւակ“ը տօնեց — սուլթան համիդի ոսկեղարը փառաւորելու համար զուցէ — բայց ի՞նչ շուտ, միթէ՞ աշխարհի վերջը մօտ է, կամ՝ ս ր բ ա զ ա ն նախազգացում մը մահուան արհաւիրքը կը զամէ իր սրտին վրայ: Ինչ ալ ըլլայ, քարեզուշակ չէ այդքան կանուխ յօբելեան մը...

Կը հաւատեն թէ՝ պատրիարքը իսկ իր ծանկին տակ կը պահէ եւ կը պահանջէ հրամայաբար, որ պատրիարքարանի կանաչ լուրերը նախ իրեն հաղորդուին: Դուշոր պատրիարքը ագազուն տերեւի մը պէս կը դողայ գրական վաշխառուին դիմաց:

Զրպարտութիւն, չարլեզւութիւն, շանտաժութիւն — շարեցէք նապատիկ մահացու մեղքերը — ահաւասիկ այն „առաքինութիւններ“ը որով օժտուած է „չարչի“ խմբագիրը՝ որուն համար աշխարհք կը վկայէ թէ մէկ փարան ցեխին վրայէն լեզուով կը վերցնէ:

Եթէ „Բիւզանդիոն“ի պ ա տ ւ ա ր ժ ա ն խմբագիրը կ՚ուզէ շարունակել ըստ Բիւզանդի (պատմագիր) իր „այլոցակերութիւնը“, շողոմութիւնները, իր ի ն ք ն ա ծ ի ն անամօթ չարաշահութիւնը, խորհուրդ կուտանք իրեն գիշերները սլքտալ Բերայի փողոցներուն մէջ եւ գործ դնել արհեստը այն մարդուն որը հին հռոմայեցիք leno կ՚անուանէին:

Ահաւասիկ աւելի սուլթանահաճոյ գործ մը:

Թ Ե Ր Թ Օ Ն

ԱՐԻՒՆՈՏ ԹԹԽՄՈՐ

Առաւօտեան Դաւիթը ժամ գնաց, իսկ Նարգիզը վեր կացաւ, երեխաներին զարթեցրեց, ուղարկեց գոմ և պատրաստւում էր թոնիրը վառելու:

Տան դուռը ճռռալով բացւեց և ներս մտաւ մի եօթ տարեկան աղջիկ՝ հարևաննեց Սօփին: Նա ձեռին բռնած ունէր խմորի մի գունդ՝ մի թթխմոր: Նարգիզի թթխմորն էր այն, որ նախորդ երեկոյ տարաւ Սօփին, որովհետև իր մայրն այսօր հաց պիտի թխէր: Բայց ինչո՞ւ էր յետ բերում այժմ, զարմացած մտածեց Նարգիզը. այսպէս վաղ հացը թխած չէին կարող լինել. օրւայ այս ժամին դեռ թոնիրն էլ չեն վառում:

Մինչ այդ՝ Սօփին կամացուկ, ասես վախվխելով, մօտեցաւ թոնրան շուրջը պատող թմբին և անվճռական ձայնով ասաց.

— Ա՛ռ ձեր թթխմորը, Նարգիզ բաջի՛:

— Աղջի՛, ձեր հացը ե՞րբ թխեցիք վերջացրիք. դեռ լոյսը նոր է բացւում:

— Դեռ չենք թխել:

— Հապա ինչո՞ւ բերիր թթխմորը:

— Մայրիկս ասաց՝ տար յետ տուր:

— Ինչու՞:

— Չեմ իմանում... է՛ն ժամը չեմ իմանում, պատասխանեց Սօփին գլուխը քաշ ձգած, ոտքերին նայելով. սակայն իր երգումը նա այնպիսի եղանակով ասաց, որից պարզ երևում էր, թէ նա բան գիտի, բայց հրամայւած է ոչինչ չ՚ասել: Նարգիզն այդ շատ լաւ զգաց. երեխան անյաջող էր կեղծում:

— Աղջի՛, ուրիշ տեղի՞ց թթխմոր բերիք:

— Ուրիշ տեղի՞ց... Հա՛, բերինք. Ալմօենց թթխմորը բերինք. մայրիկս բերեց... ես բերեցի. ասաց՝ գնա բեր, բերեցի... խմոր արինք. շատ ենք խմոր արել:

— Սօփի, ինչի՞ մեր թթխմորով չ՚արիք խմորը:

— Չեմ իմանում.. ես ի՞նչ գիտեմ. մայրիկս ասաց... մայրիկս ասում էր՝ Նարգիզ բաջիենց թթխմորը լաւը չի:

Նարգիզը մռայլեց. այստեղ մի բան կար. այս երեխան դեռ էլի բան գիտէր, իսկ ինչ որ գիտէր, լաւ բան չէր լինելու. „Յիսո՛ւս Քրիստոս“, մռմռաց Նարգիզը:

— „Թթխմորը լաւը չի“, շարունակեց Նարգիզը՝ շրթունքները կծոտելով. մեղա՜յ քեզ, Աստուած. ո՞վ էր լսել՝ „թթխմորը լաւը չի“... Աղջի՛, ի՞նչպէս թէ թթխմորը լաւը չի... թթխմորն էլ լաւ չի լինի՞...

— Չեմ իմանում... մայրիկս ասում էր՝ ձեր թըթխմորը հարամ է...

— Աղջի՛, գժւե՞լ ես, թէ՞ մէրդ է գժւել. քո ծամն էլ կտրեմ, քո մօրն էլ. մեր թթխմորն ինչո՞ւ էր հարամ լինում. արունք ենք արել ի՞նչ է, սևա՛ւոր:

— Չեմ իմանում... մայրիկս ասում էր՝ ձեր թըթխմորը արիւնոտ է, ուտել չի լինի... ասում էր... — և աղջիկը դարձեալ ինչ որ մռմռաց, շարունակ ոտքերի տակը նայելով և թթխմորը ձեռքին, բայց Նարգիզը լաւ չլսեց. սակայն նրան թւաց, որ այդպէս միամտութեամբ ասւած բառերը պէտք է աւելի սարսափելի լինէին, քան ինչ որ լսեց. ուստի ճչաց սաստիկ կատաղած.

— Աղջի, ինչ ասի՞ր...

Երեխան այդ ճչոցից վերև նայեց, տեսաւ Նարգիզի կատաղած դէմքը, սաստիկ վախեցաւ, շրթունքները դողդողացին և արցունքները կախւեցին աչքերից. Նա հեկեկաց. Նարգիզը մեղմացաւ:

— Սօփի՛, մի՛ լաց, էն ի՞նչ ասացիր, չլսեցի. մայրիկդ ի՞նչ էր ասում:

— Չեմ իմանում, պատասխանեց աղջիկը լացի միջից և կցկտուր. մայրիկս ասում էր... էն մարդերին... էն օրը... ախպէր Դաւիթն է մտնել, սպանել տւել... ասում էր, ձեր թթխմորը արիւնոտ է... ասում էր, մեղք է նրանով խմոր անել.. Ես ի՞նչ անեմ, բա՛ջի. մայրիկս ասաց, խալխն են ասում, դուրսն են ասում, շտա՛պեց աւելացնել Սօփին, նկատելով, որ Նարգիզի դէմքը կրկին կապտեց և շրթունքները ծռմռւեցին. մայրիկս ասաց՝ տար տուր, ես էլ բերի. ը՛հը՛, դնեմ այստե՞ղ, բաջի՛, հա՞...

Բայց Նարգիզն էլ չէր լսում: Աղջկայ ձայնը հնչում էր նրա ականջին ինչպէս մի անորոշ բզզոց. Նա լուռ էր. աչքերը լայն չռած, նայում էր այդ աղջկան, որ թթխմորը ձեռքին կանգնել էր նրա առաջ՝ դողալով երկիւղից... Հարւածը սարսափելի էր. ի՞նչ անել, բռնել այդ աղջկան, թոնրի մէջը կոխել վառե՞լ,

թէ՞ դուրս վազել նրանց տուն գնալ և մօր ծամերը փետել գլխին։ Ահա թէ ի՛նչ էր մտածում Նարգիզը, երբ Սօփին արտասանում էր իր վերջին խօսքերը։

Մինչ այդ՝ աղջիկը դրեց թթխմորը թմբի վրայ և շտապով դուրս գնաց դռնից։

Նարգիզը մնաց մտքերի ծովի մէջ... Այն ի՞նչ ասաց Սօփին։ Երկու շաբաթ առաջ էր, այդ լաւ էր յիշում Նարգիզը, — և ո՞վ կը մոռանար այդ դժոխքի օրը, — տաճիկ զինուորները յանկարծ պաշարեցին ջրատար Յունօյի տունը, ուր մի քանի ղարիբ մարդիկ կային։ Սարսափելի կռիւ տեղի ունեցաւ. տանեցիք ջարդուեցին, Յունօն իր զաւակների հետ սպանուեց, կինը տարան, տունը՝ կրակ տուին, և էլի ուրիշ քանի՜ մարդ սպանուեց։ Ասում էին, որ գիւղացիներից մատնող է եղել. Նարգիզն ի՛նչ այրուած սրտով անիծում էր մատնողին, բայց մի՞թէ այդ մատնիչը, այդ՝ արնպարտը, այդ հոգին կորցնողը Դաւիթն է, իր ամուսինը, և այն ծով արիւնը իր զաւակների վզին է ընկնում։ „Սօփին ասաց, մայրն է ասել, դրսում ասում են, ասում են, ասում են“... Թըթխմորն իր տեղումն էր. Նարգիզը չէր կարողանում նայել խմորի այդ հասարակ գնդին։ Սօփին ասաց հարամ է, արիւնոտ է, մտածում էր նա. իսկ եթէ ճիշդ է, ինչո՞ւ էր բարկանում։—Նա նստած մնաց իր տեղում. թոնիրը վառելը մոռացաւ. ցանը մնաց թմբի վրայ։ Բոլոր տներից ծուխը բարձրանում էր, Նարգիզի հերթիկից ոչինչ չէր դուրս գալիս։ Նա սպասում էր. դրութիւնն անտանելի էր. գոնէ Դաւիթը շուտ տուն գար՝ կամ ցրէր այս սև կասկածը, կամ մի փոս փորէր, թաղէր իրան։ „Ժամ գնա՞ց“... մռմռաց Նարգիզը թունոտ հեգնութեամբ. „աղօթո՛ւմ է“...

Երկար ու ձիգ րոպէներ անցան... Վերջապէս բակում լսեց Դաւթի ոտնաձայնն ու սովորական հազը։ Նարգիզը ցնցուեց այդ հազից, ինչպէս օձի խայթոցից. նա և շտապում էր տեսնել Դաւթին և դողում էր վճռական րոպէից՝ ինչպէս կախաղանի դատապարտուած մէկը։

Դաւիթը ·տէր-ողորմեան համրելով ներս մտաւ հանդարտութեամբ, առանց կնոջը նայելու, սուտ ճգնաւորի երկիւղած քայլուածքով մօտեցաւ հացի տաշտին, դուրս քաշեց այնտեղից մի կլոր հաց — մի բուլուճ — հանդարտութեամբ գրպանը դրեց և պատրաստւում էր գնալ Եղօենց սաքուն՝ ըստ իր սովորութեան նախաճաշ անելու, մինչև որ կինը թոնիրը կը վառէր կը վերջացնէր։ Նարգիզը լուռ հետևում էր նրա շարժումներին, նայում էր դէմքին, որից ոչինչ հասկանալ կարելի չէր, նայում էր աչքերին, որոնց կոպերից կախուած էր դեռ ևս երկիւղածութեան նման մի բան։ Երբ ամուսինը պատրաստւում էր դուռը բանալ, Նարգիզը ձայն տուեց.

— Այն ի՞նչ դրիր ջէբդ։

— Հաց է ի՞նչ է, զարմացած պատասխանեց Դաւիթը։

— Ո՞ւր ես տանում։

— Խենթ ես ի՞նչ է, ա՜յ կնիկ. տանում եմ ուտեմ, ո՞ւր եմ տանում։

— Արիւնոտ հացը կուտուի՞..

Դաւիթը գունատուեց. Նրա դէմքը վայրկենապէս այլայլուեց, երկիւղածութիւնն ու խաղաղութիւնը կորան... Թէև նա իսկոյն աշխատեց հանդարտուել, առհարկի անդորրութիւն և անտարբերութիւն ձևացնել, սակայն արդէն ուշ էր, Նարգիզը յիմար չէր։ Նրա փորձող հայեացքը մինչև իր ամուսնու հոգու խորքն իջաւ ու այնտեղ սև դժոխք գտաւ. իզուր էր խաբում Դաւիթը։ Նարգիզը սոսկաց իր գիւտից. նա դժբախտ էր, նա դողում էր ոճրից, դողում էր թափուած արեան առաջ, դողում էր իր զաւակների, իր օջախի համար։ Նա գլուխը քաշ ձգեց, երեսը ծածկեց ձեռներով, և զսպուած բարկութիւնն ու վիշտը դուրս թափուեցին յորդ արցունքներով... Կնոջ յուզմունքը ևս առաւել շփոթեց Դաւթին, և երբ կինը կրկին վերև նայեց, Դաւիթը գունատուած էր ինչպէս թուղթ ու մի ձեռքը գրպանում՝ ջղոտ անհանգստութեամբ շարժում էր հացը։ Բայց և այնպէս նա փորձեց պաշտպանուել. նա վերջին ճիգերն էր գործ դնում։

— Կնի՛կ, երա՞զ ես տեսել. ի՞նչ ես դուրս տալիս. արիւնս ո՞րն է, ես ի՞նչ արունք եմ արել..

— Ո՞ւր էր, թէ երազ լինէր, սևաւոր մարդ. երազի արիւնը բախտ է ցերեկին, իսկ այդ բախտը կտրուեց մեր տնից. տե՛ս...—Նա ցոյց տուեց թմբի վրայի թըթխմորը։ Դաւիթն ապշած նայում էր խմորին առանց բան հասկանալու, իսկ կինը շարունակեց այս անգամ աւելի ցաւով՝ քան զայրացած.

— Մեր տունը արիւնով լցուած է, սևաւո՛ր մարդ. մեր թթխմորը հարամ է, մեր թթխմորը արիւնոտ է, հարևանները մեր թթխմորով էլ չեն ուզում հաց թխել. բերին յետ տուին։ Դէ թո՛ղ սևը գայ մեզ տանի, էլ ինչի՞ ենք ապրում. Յունօյի և Կայէնի տուն շինեցիր մեր տունը, մա՛րդ. թո՛ղ Կայէնի կ ո տ ո շ բուսնի գլխիդ..

Դաւիթն այժմ հասկացաւ... Խօսք չ՛ունէր, բերանը փակուեց. կինը կրկին արտասուեց, ուստի նա բարւոք համարեց շուտով դուրս գնալ տնից դէպի սաքուն։

Գիւղամիջից անցնելիս, նա աշխատեց իր սովորական իշխանական եղանակով քայլել խրոխտ, հանդարտ, բարեպաշտ դէմքով և երբեմն երբեմն հազալով։ Եղօենց դուռն հասաւ։ Դրսից լսւում էին խօսակցութեան ձայներ. երևում էր, որ սաքուն լիքն է գիւղացիներով։ Դաւիթը դուռը քացեց և ներս մտաւ, աշխատելով չկորցնել իր ձևերն ու սառնարիւնութիւնը։ Նրա ներս մտնելու հետ ձայները մէկէն դադարեցին և նա շփոթուեց. նոյնիսկ նրան թուաց, թէ իր լսած վերջին բառերը նոյնն էին, ինչ որ կինն ասաց,—„թթխմորը հարամ է, արիւնոտ է“։ Դաւիթն իրեն չլսելու դրեց և առհարկի վստահութեամբ ասաց՝ „Ողորմի՛ Աստուած“։ Ձայնն աւելի բարձր դուրս եկաւ քան հարկաւոր էր. գոնէ Դաւթին այդպէս թուաց, և նա այնպէս փակեց բերանը, կարծես մէկը ապտակով խփեց շրթունքներին։ Այդ էլ վնաս չ՛ունէր. սարսափելին այն էր, որ իր „Ողորմի՛ Աստուած“ին ոչ ոք չպատասխանեց։ Այդ էլ չնկատելու տուեց Դաւիթը և առաջ գնաց իր սովորական տեղը գրաւելու բուխարիկից դէպի ձախ, երկրորդ տեղը՝ հաստաքեխ Մանօյի և Խուս-Հովէյի մէջ։

Դիտմա՞մբ արդեօք թէ՞ անուշադրութիւնից՝ այսօր այդ երկու մարդի մէջ շատ քիչ տեղ էր մնացել նրա համար, և երբ Դաւիթը մօտեցաւ, ոչ մէկը չշարժուեց։ Դաւիթը մի կերպ ներս սողոսկաց, նստեց։ Լռութիւնը շարունակւում էր. դիտմա՞մբ չէին խօսում թէ՞ խօսել չէր լինում։ Մօտիկ հարևաններն էլ երեսները դարձրել էին Դաւթից..

— Ժամում շատ ցուրտ էր. տէրտէրը աղօթքները բոլ կուլ տուեց,—ասաց Դաւիթը։ Ոչ ոք ձայն չհանեց. լռութիւնը շարունակուեց. խօսակցութիւն սկսելու նրա ջանքերն ապարդիւն անցան։

Գունհկութեան դրոշմ մը կայ վրան եւ անջնջելիօրէն:

Մենք չենք ուզեր ծանրանալ „Բիւզանդիոն"ի — որ իսկապէս Բիւզանդեան վէճերու բեմ մը եղած է — „ծննդոց"ին վրայ, բայց գիտենք թէ անոր խմբագիրը միաչէն, միակին մասնիչ խոռվարար մը եղած է մեր ազգային կեանքի մէջ, ան ալ իր ընուտի շահերուն համար:

Մարդ խածխծելու բնական մղում մը ունի: Իր ակռան փորձեց քանիցս Յեղափոխութեան դէմ. չէր գիտեր ի՛նչ դիրք առնել սուլթանին դիւր գալու համար: Յայտնի կամ գաղտագողի միւս հայ լրագիրները ամբաստանեց եւ զօրով իր թերթին բաժանորդներ ստեղծեց մատնութեան սպառնալիքի տակ. ազգին ու պետութեան միջեւ շիլ ու շարաշահ դիրք մը բռնած՝ թաքուն սարսափի մէջ կը պահէ որոշ հասարակութիւն մը: Ահա ալ Քէչեանի բախտախնդիր սխրագործութիւնները, ահա խմբագիր մը որ ազգային դժբախտութեան մէջէն իր ակօսը կը լայնցնէ մաքիավելական սիստէմով: Միթէ՞ խալիֆայի շուքին տակ մարդիկ ալ ստուերի պէս անխոցելի են:

Շատերէն մէկը: Օր մը ոստիկանութեան ծրի զրպարտութիւն մը ըրած էր, միշտ իր շահուն համար: Ոստիկանութեան դիմում կըլլայ. ոստիկանապետը ինք ալ կըզգար որ ստոր մատնութիւն մըն է եղածը, բայց կ՚ըսէ, չեմ կրնար բան մը ընել, որովհետեւ անանկ մէկը ժ ու ռ ն ա լ ըրած է ինծի որ, եթէ կարեւորութիւն չտամ, կարող է Ցըլըզ տեղեկագրել. ես ալ իմ կաշիէս կը վախնամ:

Արդէն ամէն մարդ գիտէ թէ ի՛նչպէս նոր հրատարակուած թերթերուն առթիւ, — որպէսզի մրցակից չունենայ — լեզուն կախ ծզած կը վազէր կառավարութեան ականջը լեցնելու, որ անոնք անիշխանական եւ հասարակավնաս թերթեր են:

Աս արինքերան մարդը վերջերս իր թերթին „հազարթեւակ"ը տօնեց — սուլթան համիդի ոսկեդարը փառաւորելու համար զուցէ — բայց ի՞նչ շուտ, մի՞թէ աշխարհի վերջը մօտ է, կամ ս ր բ ա զ ա ն նախազգացում մը մահուան արհաւիրքը կը զամէ իր սրտին վրայ: Ինչ ալ ըլլայ, բարեգուշակ չէ այդքան կանուխ յոբելեան մը...

Կը հաւատենք թէ՝ պատրիարքը իսկ իր ճանկին տակ կը պահէ եւ կը պահանջէ հրամայաբար, որ պատրիարքարանի կանաչ լուրերը նախ իրեն հաղորդուին: Խոշոր պատրիարքը ազազուն տերեւի մը պէս կը դողայ գրական վաշխառուին դիմաց:

Զրպարտութիւն, շարլեզութիւն, շանտաժութիւն — շարեցէք նապատիկ մահացու մեղքերը — ահաւասիկ այն „առաքինութիւններ" որով օժտուած է „շաբէլի" խմբագիրը՝ որուն համար աշխարհք կը վկայէ թէ մէկ փարան ցեխին վրայէն լեզուով կը վերցնէ:

Եթէ „Բիւզանդիոն"ի պ ա տ ու ա ր ժ ա ն խմբագիրը կ՚ուզէ շարունակել ըստ Բիւզանդի (պատմագիր) իր „այլոցակերութիւնը", շոլթութիւնները, իր ի ն ք ն ա ծ ի ն անամօթ չարաշահութիւնը, խորհուրդ կուտանք իրեն գիշերները սքտալ Բերայի փողոցներուն մէջ եւ գործ ընել արհեստը այն մարդուն որը հին հռովմայեցիք leno կ՚անուանէին:

Ահաւասիկ աւելի սուլթանահաճոյ գործ մը:

Թ Ե Ր Թ Օ Ն

ԱՐԻՒՆՈՏ ԹԹԽՄՈՐ

Առաւօտեան Դաւիթը ժամ գնաց, իսկ Նարգիզը վեր կացաւ, երեխաներին զարթեցրեց, ուղարկեց գոմ և պատրաստւում էր թոնիրը վառելու:

Տան դուռը ճռռալով բացւեց և ներս մտաւ մի եօթ տարեկան աղջիկ՝ Հարեւանենց Սօփին: Նա ձեռին բռնած ունէր խմորի մի գունդ՝ մի թթխմոր: Նարգիզի թթխմորն էր այն, որ նախորդ երեկոյ տարաւ Սօփին, որովհետեւ իր մայրն այսօր հաց պիտի թխէր: Բայց ինչո՞ւ էր յետ բերում այժմ, զարմացած մտածեց Նարգիզը. այսպէս վաղ հացը թխած չէին կարող լինել. օրւայ այս ժամին դեռ թոնիրն էլ չեն վառում:

Մինչ այդ՝ Սօփին կամացուկ, ասես վախվխելով, մօտեցաւ թոնրան շուրջը պատող թմբին և անվճռական ձայնով ասաց.

— Ա՛ռ ձեր թթխմորը, Նարգիզ բաջի՛:

— Աղջի՛, ձեր հացը ե՞րբ թխեցիք վերջացրիք. դեռ լոյսը նոր է բացւում:

— Դեռ չենք թխել:

— Հապա ինչո՞ւ բերիր թթխմորը:

— Մայրիկս ասաց՝ տար յետ տուր:

— Ինչու՞:

— Չեմ իմանում... էն ժամը չեմ իմանում, պատասխանեց Սօփին գլուխը քաշ ձգած, ոտքերին նայելով. սակայն իր երգումը նա այնպիսի եղանակով ասաց, որից պարզ երեւում էր, թէ նա բան գիտի, բայց հրամայւած է ոչինչ չ՚ասել Նարգիզին. այդ շատ լաւ զգաց. երեխան անյաջող էր կեղծում:

— Աղջի՛, ուրիշ տեղի՞ց թթխմոր բերիք:

— Ուրիշ տեղի՞ց... Հա՛, բերինք. Ալմօենց թթխմորը բերինք. մայրիկս բերեց... ես բերեցի. ասաց՝ գնա բեր, բերեցի... խմոր արինք. շատ ենք խմոր արել:

— Սօփի, ինչի՞ մեր թթխմորով չ՚արիք խմորը:

— Չեմ իմանում... ես ի՞նչ գիտեմ. մայրիկս ասաց... մայրիկս ասում էր՝ Նարգիզ բաջիենց թթխմորը լաւը չի:

Նարգիզը մռայլւեց. այստեղ մի բան կար. այս երեխան դեռ էլի բան գիտէր, իսկ ինչ որ գիտէր, լաւ բան չէր լինելու. „Յիսո՛ւս Քրիստոս", մռմռաց Նարգիզը:

— „Թթխմորը լաւը չի", շարունակեց Նարգիզը՝ շրթունքները կծոտելով. մեղա՜յ քեզ, Աստւած. ո՞վ էր լսել՝ „թթխմորը լաւը չի"... Աղջի՛, ի՞նչպէս թէ թթխմորը լաւը չի... թթխմորն էլ լաւ չի լինի՞...

— Չեմ իմանում... մայրիկս ասում էր՝ ձեր թթխմորը հարամ է...

— Աղջի՛, գժւե՞լ ես, թէ՞ մէրդ է գժւել. քո ծամն էլ կտրեմ, քո մօրն էլ. մեր թթխմորն ինչո՞ւ էր հարամ լինում. արունք ենք արել ի՞նչ է, սեւա՛ւոր:

— Չեմ իմանում... մայրիկս ասում էր՝ ձեր թթխմորը արիւնոտ է, ուտել չի լինի... ասում էր... — և աղջիկը դարձեալ ինչ որ մռմռաց, շարունակ ոտքերի տակը նայելով և թթխմորը ձեռքին, բայց Նարգիզը լաւ չլսեց. սակայն նրան թւաց, որ այդպէս միմոռութեամբ ասւած բառերը պէտք է աւելի սարսափելի լինէին, քան ինչ որ լսեց. ուստի ճչաց սաստիկ կատաղած.

— Աղջի, ինչ ասի՞ր...

Երեխան այդ ճչոցից վերեւ նայեց, տեսաւ Նարգիզի կատաղած դէմքը, սաստիկ վախեցաւ, շրթունքները դողդողացին և արցունքները կախւեցին աչքերից. նա հեկեկաց. Նարգիզը մեղմացաւ:

— Սօփի՛, մի՛ լաց, էն ի՞նչ ասացիր, չլսեցի. մայրիկդ ի՞նչ էր ասում:

— Չեմ իմանում, պատասխանեց աղջիկը լացի միջից և կցկտուր. մայրիկս ասում էր... էն մարդերին... էն օրը... ախպէր Դաւիթն է մտնել, սպանել տւել... ասում էր, ձեր թթխմորը արիւնոտ է... ասում էր, մեղք է նրանով խմոր անել... Ես ի՞նչ անեմ, բաջի. մայրիկս ասաց, խալխն են ասում, դուրսն են ասում, շտա՛պեց աւելացնել Սօփին, նկատելով, որ Նարգիզի դէմքը կրկին կապտեց և շրթունքները ծամռւեցին. մայրիկս ասաց՝ տար տուր, ես էլ բերի. ընձ՛, դնեմ այստե՞ղ, բաջի՛, հա՛մ...

Բայց Նարգիզն էլ չէր լսում: Աղջկայ ձայնը հնչում էր նրա ականջին ինչպէս մի անորոշ բզզոց. նա լուռ էր. աչքերը լայն չռած, նայում էր այդ աղջկան, որ թթխմորը ձեռքին կանգնել էր նրա առաջ դողալով երկիւղից... Հարւածը սարսափելի էր. ի՞նչ անել, բռնել այդ աղջկան, թոնրի մէջը կոխել վառե՞լ,

թէ՞ դուրս վազել նրանց տուն գնալ և մօր ծամերը փետել գլխին։ Ահա թէ ի՞նչ էր մտածում Նարգիզը, երբ Սօֆին արտասանում էր իր վերջին խօսքերը։

Մինչ այդ՝ աղջիկը դրեց թթխմորը թմբի վրայ և շտապով դուրս գնաց դռնից։

Նարգիզը մնաց մտքերի ծովի մէջ... Այն ի՞նչ ասաց Սօֆին։ Երկու շաբաթ առաջ էր, այդ լաւ էր յիշում Նարգիզը, — և ո՞վ կը մոռանար այդ դժոխքի օրը, — տաճիկ զինուորները յանկարծ պաշարեցին ջրատար Յունոյի տունը, ուր մի քանի զարիբ մարդիկ կային։ Սարսափելի կռիւ տեղի ունեցաւ. տանեցիք ջարդուեցին, Յունօն իր զաւակների հետ սպանուեց, կինը տարան, տունը՝ կրակ տուին, և էլի ուրիշ քանի՜ մարդ սպանուեց։ Ասում էին, որ գիւղացիներից մատնող է եղել. Նարգիզն ի՞նչ այրւած սրտով անիծում էր մատնողին, բայց միթէ՞ այդ մատնիչը, այդ արնպարտը, այդ հոգին կորցնողը Դաւիթն է, իր ամուսինը, և այն ծով արիւնը իր զաւակների վզին է ընկնում։ „Սօֆին ասաց, մայրն է ասել. դրսում ասում են, ասում են, ասում են“... Թրթխմորն իր տեղումն էր. Նարգիզը չէր կարողանում նայել խմորի այդ հասարակ գնդին։ Սօֆին ասաց հարամ է, արիւնոտ է, մտածում էր նա. իսկ եթէ ճիշդ է, ինչո՞ւ էր բարկանում։—Նա նստած մնաց իր տեղում։ Թոնիրը վառելը մոռացաւ. ցանը մնաց թմբի վրայ։ Բոլոր անուրից ծուխը բարձրանում էր, Նարգիզի հերթիկից ոչինչ չէր դուրս գալիս։ Նա սպասում էր. դրութիւնն անտանելի էր. գոնէ Դաւիթը շուտ տուն գար՝ կամ ցրէր այս սև կասկածը, կամ մի փոս փորէր, թաղէր իրան։ „Ժամ գնա՞ց“... մռմռաց Նարգիզը թունոտ հեգնութեամբ. „աղօթո՞ւմ է“...

Երկար ու ձիգ րոպէներ անցան... Վերջապէս բակում լսուեց Դաւիթի ոտնաձայնն ու սովորական հաղը։ Նարգիզը ցնցուեց այդ հաղից, ինչպէս օձի խայթոցից. նա և շտապում էր տեսնել Դաւիթին և դողում էր վճռական րոպէից՝ ինչպէս կախաղանի դատապարտուած մէկը։

Դաւիթը տէր-ողորմեան հաւրելով ներս մտաւ հանդարտութեամբ, առանց կնոջը նայելու, սուտ ճգնաւորի երկիւղած քայլածքով մօտեցաւ հացի տաշտին, դուրս քաշեց այնտեղից մի կոլոր հաց — մի բուլուճ— հանդարտութեամբ գրպանը դրեց և պատրաստւում էր գնալ Եղօենց սաքուն՝ ըստ իր սովորութեան նախաճաշ անելու, մինչև որ կինը թոնիրը կը վառէր կը վերջացնէր։ Նարգիզը լուռ հետևում էր նրա շարժումներին, նայում էր դէմքին, որից ոչինչ հասկանալ կարելի չէր, նայում էր աչքերին, որոնց կոպերից կախւած էր դեռ ևս երկիւղածութեան նման մի բան։ Երբ ամուսինը պատրաստւում էր դուռը բանալ, Նարգիզը ձայն տուեց.

— Այն ի՞նչ դրիր չէբդ։

— Հաց է ի՞նչ է, զարմացած պատասխանեց Դաւիթը։

— Ո՞ւր ես տանում։

— Խենթ ես ի՞նչ է, ա՛յ կնիկ. տանում եմ ուտեմ, ո՞ւր եմ տանում։

— Արիւնոտ հացը կուտուի՞...

Դաւիթը գունատւեց. նրա դէմքը վայրկենապէս այլայլւեց, երկիւղածութիւնն ու խաղաղութիւնը կորան... Թէև նա իսկոյն աշխատեց հանդարտւել, առհարկի անդորրութիւն և անտարբերութիւն ձևացնել, սակայն արդէն ուշ էր, Նարգիզը յիմար չէր։ Նրա փորձող հայեացքը մինչև իր ամուսնու հոգու խորքն իջաւ ու այնտեղ սև դժոխք գտաւ. իզուր էր խաբում Դաւիթը։ Նարգիզը սոսկաց իր գիւտից. նա դժբախտ էր, նա դողում էր ոճրից, դողում էր թափւած արեան առաջ, դողում էր իր զաւակների, իր օջաղի համար։ Նա գլուխը քաշ ձգեց, երեսը ծածկեց ձեռներով, և զսպւած բարկութիւնն ու վիշտը դուրս թափւեցին յորդ արցունքներով... Կնոջ յուզմունքը ևս առաւել շփոթեց Դաւիթին, և երբ կինը կրկին վերև նայեց, Դաւիթը գունատւած էր ինչպէս թուղթ ու մի ձեռքը գրպանում՝ ջղոտ անհանգստութեամբ շարժում էր հացը։ Բայց և այնպէս նա փորձեց պաշտպանւել. նա վերջին ճիգերն էր գործ դնում։

— Կնի՛կ, երա՞զ ես տեսել. ի՞նչ ես դուրս տալիս. արիւնս ո՞րն է, ես ի՞նչ արունք եմ արել...

— Ո՞ւր էր, թէ երազ լինէր, սեաւոր մարդ. երազի արիւնը բախտ է ցերեկին, իսկ այդ բախտը կտրւեց մեր տնից. տե՛ս...—նա ցոյց տուեց թմբի վրայի թրթխմորը։ Դաւիթն ապշած նայում էր խմորին առանց բան հասկանալու, իսկ կինը շարունակեց այս անգամ աւելի ցաւով՝ քան զայրացած.

— Մեր տունը արիւնով լցւած է, սեաւո՛ր մարդ. մեր թթխմորը հարամ է, մեր թթխմորը արիւնոտ է, հարևանները մեր թթխմորով էլ չեն ուզում հաց թխել. բերին յետ տուին։ Դէ թո՛ղ սևը գայ մեզ տանի, էլ ինչի՞ ենք ապրում. Ցուդայի և Կայէնի տուն շինեցիր մեր տունը, մա՛րդ. թո՛ղ Կայէնի կ օ տ օ շ բուսնի գլխիդ...

Դաւիթն այժմ հասկացաւ... Խօսք չ'ունէր, բերանը փակւեց. կինը կրկին արտասւեց, ուստի նա բարւոք համարեց շուտով դուրս գնալ տնից դէպի սաքուն։

Գիւղամիջից անցնելիս, նա աշխատեց իր սովորական իշխանական եղանակով քայլել, խրոխտ, հանդարտ, բարեպաշտ դէմքով և երբեմն երբեմն հաղալով։ Եղօենց դռան հասաւ։ Դրսից լսւում էին խօսակցութեան ձայներ. երևում էր, որ սաքուն լիքն է գիւղացիներով։ Դաւիթը դուռը բացեց և ներս մտաւ, աշխատելով չկորցնել իր ձևերն ու սառնարիւնութիւնը։ Նրա ներս մտնելու հետ ձայները մէկէն դադարեցին և նա շփոթւեց. նոյնիսկ նրան թւաց, թէ իր լսած վերջին բառերը նոյնն էին, ինչ որ կինն ասաց,— „թթխմորը հարամ է, արիւնոտ է“։ Դաւիթն իրեն չլսելու դրեց և առհարկի վստահութեամբ ասաց՝ „Ողորմի՛ Աստուած“։ Ձայնն աւելի բարձր դուրս եկաւ քան հարկաւոր էր. գոնէ Դաւիթն այդպէս թւաց, և նա այնպէս փակեց բերանը, կարծես մէկը ապտակով խփեց շրթունքներին։ Այդ էլ վնաս չ'ունէր. սարսափելին այն էր, որ իր „Ողորմի՛ Աստուած“ին ոչ ոք չպատասխանեց։ Այդ էլ ընկատելու տուեց Դաւիթը և առաջ գնաց իր սովորական տեղը գրաւելու բուխարիկից դէպի ձախ, երկրորդ տեղը՝ հաստաբեխ Մանոյի և Խուս-Հովէյի մէջ։

Դիտմամբ արդեօք թէ՞ անուշադրութիւնից՝ այսօր այդ երկու մարդի մէջ շատ քիչ տեղ էր մնացել նրա համար, և երբ Դաւիթը մօտեցաւ, ոչ մէկը չշարժւեց։ Դաւիթը մի կերպ ներս սողոսկաց, նստեց։ Լռութիւնը շարունակւում էր. դիտմամբ չէին խօսում թէ՞ խօսել չէր լինում։ Մօտիկ հարևաններն էլ երեսները դարձրել էին Դաւթից...

— Ժամում շատ ցուրտ էր. տէրտէրը աղօթքները բօլ կուլ տուեց,— ասաց Դաւիթը։ Ոչ ոք ձայն չհանեց. լռութիւնը շարունակւեց. խօսակցութիւն սկսելու նրա ջանքերն ապարդիւն անցան։

Դաւիթը հանեց չիբուխը, պատրաստեց. ոչ ոք կրակ չ՚առաջարկեց նրան. ինքը կրակ վերցրեց, վրան դրեց և սկսեց արագ արագ ծխել։ Յանկարծ Մանօն նրա կողքից վերկացաւ և դուրս գնաց։ „Ինչո՞ւ, մտածեց Դաւիթը. նա այսպէս շուտ չէր գնայ“։ Քիչ յետոյ նրան հետևեց Խուս-Հովէն։ Այդ արդէն աւելի տարօրինակ էր։ Դաւիթը կծկւեց և ողնաշարի երկարութեամբ մի պաղ բան սողաց դէպի վար։ Այժմ նա աւելի արագ արագ ծխել սկսեց, և ծուխը քուլայ-քուլայ բարձրանում էր։ Նա գլուխը քաշ էր ձգել և նայում էր չիբուխին. մէկ էլ վերև նայեց, և նրա աչքին մի սարսափելի տեսարան ներկայացաւ, — գիւղացիք իրար յետևից դուրս էին փախչում սաքուից, ուր կարծես վարակիչ ախտ էր բուն դրել։ Դաւիթը ծխելը մոռացած՝ աչքերը չռած նայում էր նրանց, և մէջքի պաղ գիծը լայնանում էր, հա՛ լայնանում. նա մօտ էր մրսելու։ Աւելի սարսափելին այն էր, որ իւրաքանչիւր գիւղացի դուրս գալուց առաջ մի թունոտ, արհամարհական հայեացք էր ձգում նրա վրայ, որից նրա արիւնը սառում էր երակների մէջ, և Դաւթին թւում էր, թէ ինքը նրանց չի ճանաչում, օտար է. այն աստիճան դէմքերը փոխւած էին, խորթ էին։

Սաքուն դատարկւեց իսպառ. Դաւիթն այժմ էլ կասկած չ՚ունէր. իր մատնութեան մասին գիտէին ամէնքը։ Սաքուն այժմ իր լռութեամբ սարսափելի էր, ահաւոր։ Բայց ո՞ւր գնալ։ Տո՞ւն... Նարգիզն այնտեղ արտասւում է արիւնոտ թթխմորի առաջ։ Եւ նա մնաց անշարժ նստած, աչքերը յառած այն պատի ճեղքին, որտեղից մի ճպուռի ողբաձայն միակերպ ճռճռոցն էր լսւում. նայում էր և չէր մտածում... Երկար ժամեր անցան... Յետոյ Դաւթին թւաց, թէ ինքը՝ ինքը չէ, թէ գիւղացիների հետ ինքն էլ դուրս է գնացել, խոմ այստեղ մենակ չէ՞ր նստի ճպուռին ականջ դնելու։ Իր ապշութեան մէջ այս միտքը նրան դուր եկաւ, մխիթարեց նրան. Բայց ո՞վ էր ինքը, — այդ հասկանալ չէր կարողանում, մտածում էր, մտածում իր ընդարմացած ուղեղով։ Այդ դրութեան մէջ նա ձեռքը մեքենայաբար գրպանը տարաւ, հացը դուրս քաշեց, նայեց. սոված չէր. մի բան անելու համար հացը դէպի բերանը տարաւ ու կրծեց և կրկին յիշեց թթխմորը, արիւնոտ թթխմորը. չէ՞ որ այս հացը նոյն թթխմորից էր, համն էլ տարօրինակ էր... Նա ծամել չկարողացաւ և սարսափով զգաց, որ այդ հացի պատառն իր բերանում ասես աճում, մեծանում է, սղմում է կոկորդը, խեղդում է նրան։ Դաւիթը շտապով հանեց բերանից պատառը և ձգեց հեռու...

Գոմի լռութիւնը աւելի և աւելի ճնշող էր դառնում։ Դուրս փախչել էր հարկաւոր, բայց ո՞ւր. այդ նա չգիտէր. միայն թէ դուրս, լայն տեղ, բաց երկնքի տակ։ Եւ նա ոտքի կանգնեց, թողեց հացը և սրտատրոփ դուրս փախաւ գոմից առանց յետ նայելու...

Մինչև երեկոյ խելագարի նման դաշտում թափառելուց յետոյ, նա քայլերն ուղղեց դէպի գիւղը։ Բայց յանկարծ, խաւար փողոցի մէջ հազիւ մի քանի քայլ արած, նրա առաջ ցցւեցին երկու խորհրդաւոր մարդիկ։ Դաւիթը ճիչ անգամ չ՚արձակեց, երբ մահացու զէնքի փայլը տեսաւ խաւարի մէջ և երբ զգաց երկաթի պաղ ծայրն իր կրծքին։ Արդարութիւնը իր իրաւունքն էր պահանջում...

Միւս առաւօտ գիւղացիք գտան նրան փողոցում դաշոյններով խողխողւած։

Մի դիակ փողոցում և մի հաց սաքւում, երկուսն էլ անախորժ գիւտեր էին գիւղացոց համար. դիակը, դաւաճանի էր, հացը՝ հարամ։ Մի խոր փոս փորեցին, արիւնոտ դիակը դրին փոսի մէջ, հարամ հացն էլ թաղեցին հետը, — թթխմորը արիւնոտ էր, ուտել չէր լինի։

—

Ամէն առաւօտ գիւղի յերդիկներից ծխի պտոյտները, որպէս թանձրացած սև հոգսեր ու ցաւեր, ձգւում են դէպի վեր, դէպի երկինքը և քօթերով բեռնաւորւած բանբերների պէս, վազում են կապուտակ անսահմանութեան մէջ, զարհուրելի բաներ են պատմում, և կարծես հաշիւ ու համար պահանջում անարդար երկնքից։ Միայն Դաւթի խրճիթից ծուխ չի բարձրանում։ Այդ խրճիթը երկնքից պահանջ չ՚ունի, այդ խրճիթը պատմելիք չ՚ունի. նա կարծես կամենում է լռել և ծածկել երկնքից այն մեծ ոճիրը, որ իր յարկի տակ է մտածւած։ Այն սև օրից սկսեալ Նարգիզն ուխտ է արել մի ամբողջ տարի էլ թոնիր չվառել, էլ հաց չթխել իր արիւնոտ թթխմորով, իր արնպարտ օջախում։ Առաւօտեան այն ժամին, երբ հարևանները կրակ են ձգում թոնիրները, Նարգիզը վերցնում է իր երկու որբերը, գնում է եկեղեցի, չոքում է խոնաւ գետնին երեխաների հետ, դառն արցունքներով թրջում է եկեղեցու յատակը և աղօթո՛ւմ է, աղօ՜թում... Ո՞ւմ համար է աղօթում նա. իր ոճրագործ ամուսնու հոգու փրկութեա՞ն թէ՞ իր զաւակների և իր օջախի վրայից արիւնը վերցնելու համար, — այդ միայն ինքը գիտէ։ Երբ նա եկեղեցուց տուն է վերադառնում, բարի հարևանները նրա օրւայ պաշարը բերած են լինում իրենց արդար հացից...

Երբեմն երբեմն երեխաները զարմացած հարցնում են մօրը.

— Մայրիկ, ինչու հաց չես թխում։

— Թթխմոր չկայ, ձեզ մեռնեմ. մեր թթխմորը արիւնոտ է, պատասխանում է մայրը, և զսպւած արցունքները թափւում են աչքերից կաթիլ-կաթիլ։ Եւ նայում են մանուկները խոր վշտով երկա՜ր, երկա՜ր, և մտածում են, մտածում, բայց նրանց փոքրիկ գլուխները չեն կարողանում հասկանալ, թէ ինչու է արտասւում մայրը և ինչո՞ւ է թթխմորն արիւնոտ...

ՂԱՐԻԲ

ՄԱՀԱԳՈՅԺ

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ

1899 դեկտեմբեր 1-ին Կ. Պօլսոյ մէջ մեռաւ, 29 տարեկան հասակին մէջ, Տիգրան Երկաթ (Կարապետ Պիլէզիկճեան) երիտասարդ հայ գրողը։ „Դրօշակ“-ի խմբագրութիւնը, միանալով այդ զգալի կորուստին առթիւ արտայայտւած ցաւակցութիւններուն, հետևեալ համարին մէջ պիտի նուիրէ առանձին յօդւած մը անոր մասին։

Խմբագրութեանս դիմել հետևեալ հասցէով՝
Rédaction du **Droschak**, Genève (Suisse)